

III

ՅԱԽԵՂԻՄԸ „ԱՐՁԱԳԱՎԵՐԻ“

ՄՈՎՍԵՍ ԽԱՅԵՆՑԻ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՎԵՊԵՐԸ

ՔՆՆ ԱԿԹՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

ԳՐԵԱԼ. Ե. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԹԻ
ԱՐԴ Ե ՏՓԽԻՑՈ

Թ Ա Բ Գ Ժ Ա Խ Ե Ե Գ Թ Ա Բ Բ Ե Կ Ե Ե Գ Գ Ա Խ .

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ Ա Վ Ա Վ Ա Ր Գ Ա Կ Ա Խ Ե Ա Վ Ա Ր Ա Խ

1886



III

ՅԱՐԵԼՈՒԾԾ „ԱՐՉԱԳԱՆՔԻ”

90 (Կ7.925) (092 Մարտին Խորենաց)

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

891.99.03

ԵՒ


ՀԱՅՈՑ ՀԻՆ ՎԵՊԵՐԸ

Ք Ն Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն

A
11
5600

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

ԴՐԵԱՆ. Ե. ՀԱՅՈԳԻՏՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԹԻՒ ԱՐ Շ Տ Տ Ֆ Ի Ւ Ա.



Թ Ւ Ց Լ Ի Ս

Մ Ո Վ. Գ Ա Ր Դ Ա Ն Ե Ա Ն Ե Տ Տ Վ Ա Ր Ա Բ

1886



Дозволено Цензурою 13 Сентября, 1886 г. Тифлисъ
Типографія М. Вартанянца. Тройц. пер. д. № 11

Ա Զ Գ.

Գիտնական պ. Մկր. Էմինի „Խօրենսկիй
և ճրենի Թուստ Արմանսկի“ քննական հե-
տազոտութեան մէջ՝ ինչպէս ընթերցողը
կ'տեսնի, շատ հատուածներ են առաջ բե-
րած Խորենացու Պատմութեան բնագրից.
ուստի թարգմանչի համար երկու միջոց
կար. մէկը՝ որ դիւրագոյնն է, անփոփոխ
թողնել Խորենացու բնագիրը գրոց լեզուով
և միւսը՝ աշխարհիկ լեզուի դարձնել բնագրի
հատուածները։ Ես ընտրեցի երկրորդ եղա-
նակը (բացառութեամբ չափարերական հա-
տուածների), նկատողութեան առնելով գրա-
բառի և մանաւանդ Խորենացու լեզուի դը-
ժուարութիւնը շատերի համար, թէև՝ ըստ
իս, թարգմանութիւնը ոչ ամեն տեղ յա-
ջողած է։

Առաջին անգամը չէ, որ մամուլի մեջ մեր թիվուրեամբ կատած է Երեսում Մովսես Խորենացու առանձան Մար-Աքասիի և Քաղդեական Դրբի վաներականուրեան մասին, այն զրբի, որ Մեծին Աղքատանը, ճրանանու բարգմանուել է յահարքն եւ որից Վաղարշակ բազաւորի յանձնարարուրեամբ, բաղուած է արել զիտական Ասորին Եփուակի դիւանում։ Ին Ֆրամսիացի, թէ Գերմանացի եւ թէ Հայ զիտականները զրել են թիվուրիւններ Մար-Աքասի մասին, բայց՝ ինչպէս որ ովկոր էր սպառել, խրաբանցիւրը իւր տեսակէսից։

Առաջին տեղը, ըստ մամանուկին, այդ զիտականների մեջ բանում է 1) Quatremère, տես նորս յօդուածը «Observation sur la ville de Ninive»—Journal des Savants. 1859 յունիս, 3-e article. էջ 364—65.

2) Histoire générale et système comparé des langues sémitiques, Ernest Renan, seconde édition. 1858, էջ 256:

3) Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren, Gutschmid, 1876, էջ 31 եւ այլք։

4) Քննական որակուրիւն Հայոց, Ա. Մ. Գարազաց և անի թ. 1880 թ. Կ. Պօլիս.—Այս աշխատուրիւններ մեր ձեռք չեն անցած, բայց՝ ինչպէս բառն ենք, բավանդակում է իւր մեջ խիստ թիվուրիւն Մովսես Խորենացու Պատմուրեան։

ՄՈՎՅԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ԵԱ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՎԵՊԵՐԸ

«Քենա մենք մի փորրիկ ազդ ենք, բուռով շատ
նուազ, գօրուրեամբ տկար են այլ բազմուրուրեամբ
բազում անզում նուստնուած, սակայն են մեր աշ-
խարհում կան կատարուած շատ բաջուրեան գոր-
ծեր՝ արժանի պատմուրեան մեջ լիշտավիճու...»

Մ. Խոչէն. Գր. Ա. Գև. Յ:

Մինչեւ ներկայ դարուսս կէսը հայ զիտնականները
և եւրոպացի հայրագէտները այն համոզմունքին էին, թէ
չին հեթանոս Հայաստանը վիստասանութիւն չունէր։
Այս մասին զիտնականների բոլոր տեղեկութիւնները
սահմանափակվում էին միակ հատուածով, որ է
Մեծին Տիգրանի կարծեցեալ որդի՝ Ա.ահազնի ծնունդը։
Այս չափարերական հատուածը պահպանուել է Մովսէս
Խորենացու պատմութեան մէջ։ Նորա վերալ առաջին
անդամ ուշադրութիւն դարձրին Վենետիկի Մխիթարեան-
ները, թէ և չգուշակելով նորա վիստական ծագումը։
Մօտաւորապէս ալդ ժամանակ լուս տեսաւ զրոց լե-
զուով ալս տողերը զրողի «Քննութիւնը», որու նպա-
տակն էր՝ հակառակ վազուց բնդունած բացասական կար-
ծիքին՝ ապացուցանել, թէ հեթանոս Հայաստանը՝ ընդ-
հակառակը՝ ունէր ընդգարձակ վէպեր, որք ալդ երիք

Հնագոյն դարերի պատմութեան տեղն էին բռնում։ Հայոց գրականութեան հետաքրքրողների համար մեր «Քննութիւնը» առանց ուշադրութեան չանցաւ. — նորանից յետոյ սկսան մէկ մէկի հետքից լուս տեսնել հայերէն և ֆրանսերէն լեզուով քննութիւններ հին հայոց վիպական երգերի մասին։ Նոքա բոլորեքեան առանց բացառութեան աւելի կամ պակաս կրում էին իրենց վերալ լիշեալ «Քննութեան» ազգեցութիւնը։ Սորա հրատարակուելուց յետոյ մեր նախկին հայեացքը հայոց վէպերի վերալ շատ ընդարձակուեցաւ։ Եւ այդ հայեացքն է, որի հետ մենք ալժմ կամիմք ծանօթացնել ընթերցաղներին առաջիկայ տողերում։

Հայկագունեաց թագաւորների նկարագրութիւնները Մովսէս Խորենացու պատմութեան Առաջին գրքում չեն կրում իրենց վերալ օտարազգի հետքեր, կասենք ուղղակի, — ոչինչ Քաղգէական նշան։ Հայկից սկսած մինչեւ Մեծն Տիգրանը այս հարստութեան բոլոր թագաւորների մէջ մենք տեսնում ենք իսկական ազգային Հայ հերոսներ։ Այնպիսի տիպարներ, ինչպէս Հայկը, Արամը, Արայն, Մեծն Տիգրանը, կարող էր ստեղծել, յայտնի բան է, ոչ Քաղգէացին, ինչպէս հաւատացնում է Մովսէս Խորենացին Մար — Արասի բերանով, այլ Հայը և միայն հայը։ Այս վսիմ պատկերների ստեղծողներն Հայ վիպասաններն էին։ Մենք կը տեսնենք, որ իսկապէս վիպական երգերի և ոչ այլ ինչի վերալ հիմնուած է բոլոր Հայկագունեաց պատմութիւնը։ Այս միտքը մենք ակներե կը կացուցանենք և կ'ապացուցանենք, որ Հայոց նախնական պատմութիւնը Խորենացու աշխատութեան մէջ հաստատուած է ազգային վէպերի վերալ, բազմա-

թիւ վիպական աւանգութիւնների վերալ: Այն ժամանակ Մար—Աքասը Նինուէի զիւանից հանած իւր հըռչակաւոր քաղդէական գրքի հետ կ'կորցնեն իրենց նըշանակութիւնը:

Ինչպէս հին ժամանակները, այնպէս և յաջորդ—նոր ժամանակները ժողովրդական բանաստեղծութիւնը ունէր Հայաստանում — ինչպէս այժմ այդ անկասկած առացուցած է — բազմաթիւ ներկայացուցիչներ՝ ժողովրդական երգիչներ, բանաստեղծներ, աշուղներ:

Վերջին քսան և հինգ տարում լոյս են տեսել ժողովրդական գրականութեան վերաբերեալ բաւական ժողովածուներ Հայոց զանազան բարբառներով: Ենորհիւ արժանի լիշտատակի Գէորգ Ախվերդեանի, որ առաջին անգամը տուեց մեզ Սայաթ—Նօվալի երգերի օրինակի հրատարակութիւնը, ամբողջ շարք Հայ ուսումնասէր երիտասարդների հետեւց նորա օրինակին: Նոքասիրով սկսեցին ժողովել և հրատարակել ժողովրդական բանաստեղծութեան զանազան տեսակները Թուսաց և Տաճկաց Հայաստանում: Նոցա ձեռքով հաւաքուած են շատ ժողովրդական երգեր՝ կեանքի ամեն մի դէպքի վերալ հնարած: Այստեղ ոլատահում են դիւցազնական զրոյցներ՝ ճիշդ վիպական ձեռվ, երգեր—պատմական, սիրահարական, հարսանեաց, պարուց, վիճակահան, երգումներ, հեքեաթներ և այլն: Ժողովրդական ալս աւանդութիւնների հրատարակումը՝ մասամբ արգէն ըսկուած՝ բաց կանէ ժամանակով Հայ և Եւրոպացի գիտնականների առաջեւ նոցա դեռ ևս անծանօթ մի էլ Հայկական բերանացի գրականութեան:

Առաջ քան խօսենք հեթանոս Հայաստանի Վէպերի մասին, հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել այն աղբիւրների վերաբեմամբ, որոնցից քաղուած է արել Խորենացին իւր պատմութեան Առաջին Գրքի համար: Այս անհրաժեշտ է մանաւանդ նորա համար, որ մեր յարուցած խնդիրը, մեր համոզմունքով, գլխաւորապէս հիմնը-վում է Առաջին Գրքի վերալ: Այս իսկ պատճառով մենք առաջ մի առ մի կ'թուենք այն աղբիւրները, որոց վերալ ակնարկում է Խորենացին, ապա կ'ոկտենք մանրամասնօրէն բացատրել մեր կարծիքը Հալոց Վէպերի մասին:

Խորենացու Առաջին Գիրքը ունի այն կարևոր նը-շանակութիւնը, որ առանց գորան Հալոց ազգը զաղափար չէր ունենալ իւր սկզբան և ծագման վերալ. պատճառը որ բացի Խորենացուց ոչ ոք Գ.թդ և Ե.թդ դարու ժամանակագիրներից և պատմիչներից, որոց երկասիրութիւնները հասել են մեզ, չէ խօսում գոցա մասին: Իսկ յաջորդ գարերի պատմիչները կրկնում են Խորենացու պատճանը, Ուստի ցանկալի է իմանալ, թէ ինչի վերալ է հիմնում Խորենացին հնագոյն գարերին վերաբերեալ իւր պատմութիւնը, որ սկսվում է աւելի քան 2000 տարի Քրիստոսից առաջ:— Առա պատասխանը մենք կ'ներկայացնենք ստորև, բայց ալժմ կ'նկատենք, որ մեր պատմիչը իւր Առաջին Գրքի համար ունեցել է

ալս աղբիւրները. մի կողմից — Սուրբ Գիրքը, Աղեքսանդր
Բագմավէպը, Եփւռոսեան Սիրեղզան, ինքը Եփւռոսոր,
Արիւղինոսոր, Կեֆաղիոնը, Մանէթօնը, Յովսէպոսը և
քերանացի աւանդութիւնները. միւս կողմից — Ասորի
Մար — Արաս Կատինան: Բացի Մար — Արասից, վերոքե-
րեալ աղբիւրները, նայելով նոցանից արած Հակիրճ և
Համառօտ քաղութծներին, որոց մէջ է քերում մեր
սկատմագիրը, ճառում էին ոչ թէ Հայերի, այլ Արե-
մտեան Ասիալի և առհասարակ հին աշխարհի միւս ազ-
գերի վերալ: Միայն մի տեղում Խորենացին՝ ակնարկե-
լով Արիւղինոսի վերալ՝ վկալութիւն է առաջ քերում
նորա զրուածից Հայկի և նորա անմիջական լաջորդնե-
րի մտսին: Աւշագրութեամբ գիտողը կ'համոզուի, որ
արդ Համուածը Արիւղինոսի զրուածի մէջ երբէք չէ
եղել և կարող չէր ևս լինել *):

Խորանով կ'ամփոփենք մեր խօսքը վերոլիշեալ աղ-
բիւրների մասին և կանցնենք մեր զլխաւոր առարկալին՝
Մար — Արասին և նորա Հայոց Պատմութեանը:

Մեծն Արշակ, ասում է Խորենացին, թօթափելով
Մակեդոնական լուծը և նուաճելով Ասորեստանը, թա-
գաւորեցնում է իւր եղբայր Արարշակին Հայոց աշ-
խարհի վերալ: Նոր թագաւորը՝ Արշակունեաց Հարստու-

*: Նկատողութեան առնելու է. որ Ասորեստանցոց ազ-
գարանութիւնից անմիջապէս յետոյ, Խորենացին գնում է Հայ
նահապետների ազգարանութիւնը, Ակսուելով Արայից, ոյդ
Ճննդարանութիւնը հասնում է դէպի վեր մինչև Հայկը առա-
ջիկայ կարգով. «Արայ գեղեցիկ (Ճնաւ) Արամից, Արամը —
Հարմայից, Հարման — Գեղամից, Գեղամը — Ամասիայից, (Ամա-
սիան — Արմայիսից, Արմայիսը — Արմենակից, Արմենակը — Հայ-

թեան գլուխը Հայաստանի մէջ, ցանկալով իմանալ թէ ինչ
մարդիկ են տիրել ալր աշխարհին իրանից առաջ, քաջերք
արգեօք, թէ փատերի տեղն է անցնում ինքը,—որոնում
և գտնում է մի «ուշիմ» Ասորի՝ Մար—Աբաս անունով,
որին ուղարկում է Մեծին Արշակի մօտ ալսպիսի նա-
մակով. «Ես քեզանից պատուէր ստացալ հոգ տանել
քաջութեան և իմաստութեան, և երբէք անփոլթ եղած
չեմ գէտի քո խրատը, այլ ընդհակառակը՝ խնամ տա-
նելով հոգացալ ամեն բանի, որչափ բաւեցին իմ միտքս
և հասողութիւնս: Եւ ալժմ, երբ ես շնորհիւ քո
խնամակալութեան կարգի դրի այս թագաւորութիւնը,
կամիմ իմանալ. ով է ինձանից առաջ տիրել Հայոց աշ-
խարհին և որտեղից են առաջ եկել ալն նախարարու-
կից»: որ եղաւ հակառակորդ Իէլին միանդամայն և նորա կե-
նախուզը»:

Արիւգոնոսից հանած տողերի վերայ Խորենացին աւե-
լացնում է այս նկատողութիւնը. «Սորա մասին մեզ պատմում
է Արիւզինոսը իւր առաջին Գրքի մանրամասն աղքաբանու-
թեան մէջ, որ յետոյ սմանք բաց թողին:»

Հարցանելու է՝ ով էին այդ «ոմանքը», ի՞նչ դիտուորու-
թեամբ Արիւզինոսից յետոյ եղած պատմչները գուրս էին
ձգում յիշեալ տողերը և ինչու իսկապէս այդ տեղը նորա բաց
թողին. Միթէ կարելի է թոյլ տալ այդպիսի կամայսկանու-
թիւն բոլոր՝ առանց բացառութեան. Արիւզինոսից յետոյ
ծաղկած պատմչների կողմից, Մենք կարծում ենք, որ Հայոց
նահապետների այս աղքաբանութիւնը ուղղակի Խորենացունն
է: Այս իսկ պատճառաւ նորան չենք տեսնում միւս պատմչ-
ների զրուածների մէջ: Իւր աղքաբանութեանը աւելի հեղի-
նակութիւն տալու նպատակաւ՝ Խորենացին առաջ է բերում
նորան իւր պատմութեան մէջ այս կեղծեալ պատճառանքով:

թիւնները, որ ալժմ կան։ Արովհետեւ չի երևում, որ այստեղ լինէին որևէ կարդեր կամ մեհենական պաշտամունք. ոչ աշխարհի գլխաւորներից առաջինն է լալտնի և ոչ վերջինը. ոչինչ օրինաւոր բան չկալ այստեղ, այլ ամենայն ինչ խառնիխուռն է և վայրենի։ Վասնորոյ խնդրեմ... Հրամալես բանալ քո արքունի դիւանդ այն մարդու առաջև, որ ներկալանում է քո հզօր Տէրութեանդ, որպէս զի նա՝ գտնելով քո եղբօր և որդւոյդ ուզածը, փութապէս բերէ նորան ստոլդ տեղեկութիւններ։» — Արշակը Հրամալում է բանալ Մար—Արասի առաջև Նինուէի արքունական դիւանը։

Այստեղ «ուշիմ» Ասորին գտնում է մի մատեան՝ Քաղզէարէնից Յունարէն թարգմանած Մեծն Աղեքսանդրի Հրամանաւ, որ բովանդակում էր իւր մէջ բուն չնոց և նախնեաց պատմութիւններ։ Այս մատենից Մար—Արասը հանում է միայն Հայոց ազգի Հաւաստի պատմութիւնը և բերում է Վաղարշակ թագաւորին։ Վաղարշակ՝ իւր առաջին գանձը համարելով այս, զգուշութեամբ պահում է իւր արքունիքում և նորա մի մասը Հրամալում է դրօշմել արձանի վերալ *):

«Միտ զնելով, ասում է Խորենացին, գառնալով դէպի իւր մեկենաս Սահակ Բագրատունին, այս մատենում նշանակած զրոյցների կարգին և համոզուելով նոցա Հաւաստի լինելուն, մենք ալժմ կրկնում ենք գոցաց քո հարցասիրութեանդ, ձգելով մեր բնիկ նախարարութիւնները մինչև Քաղզէացոց Սարգարապաղը և ևս մօտագոյն» **):

*) Խորենացի, Պատմ. Հայոց. Գիրք Ա. Գլ. 8. 9.

**) Կոյն տեղը, Գլուխ. 9.

Կանգ առնենք ալս պատմութեան վերալ և յի
կողմից միտ դնենք նորա էութեանը:

Հինգերորդ դարուց սկսած մինչև ներկալ ժամա.
նակը բոլոր Հայոց մատենագիրները, որպէս և ինքը
ժողովուրդը, միշտ ճանաչում էին Մար-Արասին ան
ռուշիմ մարդը, որ հրաւիրուելով Վաղարշակից 150
թ. Քրիստոսից առաջ, չ'նայելով իւր օտարազգի ծագ-
մանը,—Հանգիսանում է հին Հայոց ազգաբանութեան
գտնողը և նոցտ նախնական պատմութիւնը խսպառ կո-
րուսակից փրկող անձը: Մի օտարազգի մարդու հրաւի-
րուիլը, որպէսզի նա պատմէ Բ. դարու (Քրիստոսից
առաջ) խաւար Հայերին նոցա աշխարհի սկիզբը և ծա-
գումը—իսկոյն գրաւում է մեր ուշադրութիւնը: Եատ
դժուար է հաւատալ, որ այդ ժամանակ Հայաստանում
չ'լինէր ոչ մի զրագէտ Հայ մարդ, որ կարողանար կա-
տարել իւր թագաւորի յանձնաբարութիւնը. չէ կարելի
հաւատալ, որ թագաւորը ստիպուած լինէր հրաւի-
րել այդ գործի համար մի օտարազգի մարդու: Պատ-
ճառը որ նոյն իսկ Խորենացու պատմութիւնից մենք
գիտենք, որ նորա հին Հայերնիքում կալին. Ա, Մեհեան-
ներ և Քրմակոն դաս, ¹⁾—Բ, «մատեանք մեհենից²⁾»,
—Գ, «պատմութիւնք մեհենից³⁾», Դ, «մատեանք թա-
գաւորաց ⁴⁾», Ե, «ամբաւ զրուցաց մատեանք ⁵⁾»—
Զ, նախնի վիստական զրոյցներ, «որ ՚ի գուսանականէն
գտանի ժողովեալ ՚ի դիւանի արքունեաց ⁶⁾»—Ե, «երգ

¹⁾ Գիրք Ա. ԳԼ. 8. Գր. Բ. ԳԼ. 48, ²⁾).—Գր. Ա. ԳԼ. 14.
^{—3)} Գր. Ա. ԳԼ. 14.—Գր. Բ. ԳԼ. 48.—⁴⁾ Գր. Ա. ԳԼ. 14.
^{—5)} Գր. Ա. ԳԼ. 3. ⁶⁾ Գր. Ա. ԳԼ. 14.

վիպասանաց⁷⁾—Ը, թուելեաց երգեր, որք ժամանակագրական կարգաւունքի կամ հշխանների արարքը⁸⁾—ԹՅ, պատմական «առասպելք»⁹⁾: Կալին և այնպիսի լիշտակարաններ, որոնց անունները թէև չէ լիշտում Խորենացին, այնու ամենայնիւնոքա գոյութիւն ունէին նորա ժամանակ և նա քաղուածներ է արել նոցանից, ինչպէս—մ, այն պատմութիւնը, որից ստուգում է Վաղարշակը, «տէր» նշանակելով Սիւնեաց աշխարհին, և որոյ վերալ Խորենացին ևս ակնարկութիւն է անում,¹⁰⁾—ՖՈ., այն պատմութիւնը, որ ճառում է Բագրատունեաց ցեղի ծագման և Հայկի մասին,¹¹⁾—մԲ, այն անանուն չորս գիրք բաժանած պատմական աղբիւը, որոյ մասին հիացմամբ է խօսում Խորենացին և որից նա քաղում է Վարքակէսի, Սարգանապաղի և Հայոց թագակիր Պարուրի պատմութիւնը¹²⁾: Եացի սոցանից կալին և շատ—մԳ, աւանդութիւններ¹³⁾, որոց Խորենացին, ինչպէս պատիչ, գնահատում էր ըստ արժանեալն:

Քրմական գասը բոլոր հին ժամանակները և ամեն մի ազգի մէջ պահպանող էր իմաստութեան, և մի և նոյն ժամանակ ժողովրդի տարեգրութիւն կազմողն էր: Ալսպէս էր և Հայաստանում: Կասկած չկալ որ Հայոց քրմերի մէջ կալին՝ ինչպէս վերեւում լիշտ է, անձինք, որք նոյնչափ լաջող, եթէ ոչ Մար-Աբասից ևս աւելի, կ'կատարէին Վաղարշակի հրամանը,—որ

—⁷⁾ Գր. Ա. Գլ. 15. Գր. Բ. Գլ. 48.—⁸⁾ Գր. Ա. Գլ. 30. 24—31.—⁹⁾ Գր. Ա. Գլ. 18. ¹⁰⁾—Գր. Ա. Գլ. 12.—¹¹⁾ Գր. Ա. Գլ. 22.—¹²⁾ Գր. Ա. Գլ. 21.—¹³⁾ Գր. Ա. Գլ. 12.

վերոբերեալ աղբիւրների ամբողջ շարքում՝ մանաւանդ «թագաւորաց» և «մեհենից» մատեանների մէջ՝ կար, եթէ ոչ Հայաստանի կարգաւորեալ և ամփոփ նախնական պատմութիւնը, գոնէ հաստատ ակնարկութիւն ալդ պատմութեան վերայ:

Ա. առնորու մի օտարոտի երեսիթ է տեսնել, ինչպէս Վաղարշակը՝ չստուգելով իւր տէրութեան մեհենական գիւաններից՝ նինուէի դիւանումն է որոնում Հայոց պատմութիւնը: Նշանաւոր Գնոստիկոս Բարդածանը, Բ. գարում Քրիստոսից լետոյ, գալիս է Հայաստան՝ նիւթ ժողովելու իւր պատմական աշխատութեան համար և Անի բերդում քաղուած է անում «մեհենական պատմութիւն» ասուած մատենից, որ բովանդակում էր իւր մէջ Հայ թագաւորների արարքը: Խորենացու այս և սորա նման այլ ցուցումներից երեսում է, որ Հայոց քուրմերի մէջ կալին պատմագիրներ, որ Հայաստանը ունէր իւր պատմութիւնը, որը Դ. գարու առաջին տարիներում քրիստոնէութիւնը տարածելու ժամանակ անհետ ջնջուեցաւ Դրիգոր Լուսաւորչի ձեռով: Այսպիսի մի քուրմ—պատմագրի անունը լիշում է Խորենացին առաջիկայ խօսքերով. «Աւղիւալ՝ քուրմ Անուոյ՝ զրող Մեհենական պատմութեանց¹⁾»—(115 թ. Քրիստոսից առաջ): Բացի սոցանից հեթանոս Հայաստանում, հնագույն ժամանակներից սկսած, կալին պատմական երդերի ժողովածուներ, որք պահվում էին գիւաններում: Այս ժողովածուները, ինչպէս ստորև կտեսնենք, գոյութիւն ունէին գեռ Ե. գարում և Խորենացին քա-

¹⁾ Գր. Բ., թլ. 48.

դուածներ է արել նոցանից²⁾ : — Քանի որ կային այս-
չափ առատ տեղական ազգային նիւթեր, աւելորդ էր
ուրեմն գիմել նինուէի գիւանին:

Նինուէի գիւանի հոչակուած գըքի մէջ, — թոյլ
տանք մի ըոտէ, որ նա գոյութիւն է ունեցել, կարող
էին լինել թերեւս նկարագրութիւններ կամ՝ աւելի
ճիշտ, լիշտակութիւններ Ասորեստանի և Հայաստանի
մէջ եղած պատերազմների մասին, Հայերի Ասորեստանին
հպատակ լինելու մասին. բայց անհաւատալի է, որ նա
ամփոփէր իւր մէջ Մեծին Հայոց ազգաբանութիւնը,
ինչպէս հաւատացնում է մեզ Խորենացին:

Մօտ ծանօթանալով, ասում է Խորենացին, Մար —
Աբասի Գրքի հետ, նա հոմոզուել է, որ նորա մէջ ըո-
վանդակած զրոյցները հաւաստի են: Բայց ալսպիսի
համոզմունք կազմելու համար պէտք է հիմք ունենալ,
որով կարելի լինէր ճանաչել զրոյցների որ աստիճան
հաւաստի կամ անհաւաստի լինելը. իսկ Խորենացին չու-
նէր գորան, չունէր, որովհետեւ ինչպէս ինքը, նոյնպէս
և Վաղարշակը գիտմամբ չէին ուզում ճանաչել ալդ
հիմքը վերուիշեալ բազմաթիւ ազբիւրների մէջ:

Թոյլ տանք նոյնալէս, որ 150 թ. Քրիստոսից ա-
ռաջ նինուէի գիւանի գըքից արած Քաղուածը Մար —
Աբասի ձեռով բերած է Հայաստան, որ ալդ Քաղուածը՝
ինչպէս մի թանկագին գանձ, պահպում էր ալստեղ ար-
քունիքում, որ նորա մի մասը թագաւորի հրամա-
նաւ դրոշմած էր արձանի վերալ:

Այս Քաղուածը, — գորա մասին մենք գիտենք նոյն

²⁾ Գր. Բ., 72. 49, 61.

իսկ Խորենացուց, մնաց մինչև Ե. դարը, որովհետեւ
Խորենացին դորա վերալ է Հիմնում իւր Պատմութեան
բոլոր Առաջին Գիրքը: Չնալելով, որ Քաղաւածը 650
տարի գոյութիւն է ունեցել Հայոց մայրաքաղաքուն
և ոչ թէ մի որե է անկիւնում, սակայն ոչ մի Հայ
պատմագրի կամ ժամանակագրի չէ յաջողած տեսնել
դորան և մի խօսք ասել դորա մասին: Ի՞նչպէս մեկ
նելու է այս երեսլթը: Ի՞նչպէս մեկնելու է, որ ըոլոր
այն ժամանակուալ լուսաւորեալ աշխարհում ոչ մի
զիտնական Քաղցացի, Յոյն, Ասորի, Պարս չգիտէր այն
լիշտակարանի գոյութեան մասին, որ գրաւել էր իւր
վերալ Մեծին Աղէքսանդրի ուշագրութիւնը. — այլ
զիտէ միայն Խորենացին. իսկ նորա Հայրենակիցներից
և ոչ մէկը: Աերջապէս՝ Բնչպէս չ'Հարցնենք. որտեղ
է տեսել Հայ պատմագիրը ալդ «զանձը», — զանձ իւր
Հնութեամբ և բովանդակութեամբ. Մծրինում արգեօք՝
Հայոց այն ժամանակուալ մայրաքաղաքում, Տարօն գա-
ւառում, որ նորա ծննդեան տեղն էր (Խորնի), թէ
մի այլ տեղում: Նա, որ այնպիսի խնամով ծանօթաց-
նում է մեզ Վաղարշակի Մեծին Արշակի Հետ ունեցած
կարծեցեալ զրագրութեան Հետ, միթէ չէր կարող գոնէ
Հարեանցի նկատել թէ որտեղ է արգեօք ինքը արել
իւր քաղուածները Մար — Աբասեան Գրքից և որտեղ
է նորան թողել: Այսպիսի լիշտակարանը արժանի էր
ուշագրութեան: Մենք մանաւանդ իրաւունք ունինք
այս պահանջելու Խորենացուց, որ զիտենք՝ թէ որպիսի
ճշտութեամբ է նա ցոլց տալիս իւր աղբիւրները:
Այսպէս, ի միջի ալլոց, իւր Պատմութեան Երկրորդ Գրքի
10-րորդ գլխում, աւարտելով Մար—Աբասի Գիրքը,

նա անցնում է աղլ աղբիւրի, ալն է՝ Յուլիսս Ափրիկանոս ժամանակագրի (Գ. դարու) պատմութեանը, և ասում է, թէ սա Եղեսիոլ դիւանի քարտէզներից այնպիսի քաղուածներ է արել, որք վերաբերում էին Հայոց թագաւորներին: Եւ որպէս զի համոզէ, թէ իւր ցուցումը ստոյգ է, Խորենացին հրաւիրում է ընթերցողին տեղեկանալ Եւսեբիոս կեսարացու «Եկլիսիաստէ» գրքի Հայերէն թարգմանութիւնից. «Որոնիր նորան, ասում է նա, Սիւնեաց գաւառի Գեղարքունիքում և Առաջին Գրքի 13-րորդ գլխում վկայութիւն կ գտնես, թէ Եղեսիոլ դիւանում կալ պատմութիւն Հայոց առաջին թագաւորների բոլոր գործերի մասին մինչև Արգարը և Արգարից սկսած մինչև Երուանդը»: — Սորանից լետոյ անհասկանալի է Խորենացու անհոգութիւնը դէալի ճիշտ և լիամտան տեղեկութիւնները՝ իւր տեսակով միակ լիշտակարանի մասին, որ բովանդակում էր իւր մէջ Հայոց ազգի սկզբնական պատմութիւնը: Նա ցոյց է տալիս իւր ընթերցողին ալն ժամանակուայ Հայաստանի որ անկիւնում գտնելու է Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութիւնը, ցոյց է տալիս որ զիրքն է, որ գլուխն է, բայց չէ ասում՝ որտեղ արգեօք Ե. դարում իւր ընթերցողը կարող է տեղեկանալ Մար — Աբասի իւր հայրենեաց հնագոյն ժամանակների Պատմութեան պահպանողի մասին:

Առաջին Գրքի 21 -րորդ գլխում, պատմելով Վարբակէսի պատերազմը Սարդանապաղի դէմ և առաջնի լաղթութիւնը Հայկազն Պարուրի օգնականութեամբ, Խորենացին հրաւիրում է Սահակ Բագրատունուն չ'զարմանալ, եթէ առալլս (պատմագիրս) ալլազգաբար պատմի: Եթէ լիրաւի

նա ունէր իւր ձեռքում Մար—Աբասի Գիրքը, որից նա
մինչև այժմ տռաջ էր բերում Հայաստանի անցեալ վի-
ճակին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները, ապա ու-
րեմն հարկ չ'կար երթադրել, թէ իրեն կ'հարցնեն. «ո՞ր
տեղից է նա քաղել մեր նախնիքներից շատերի անուն-
ները և գործերը»: Անշուշտ այսպիսի հարց չէր տռա-
ջարկիլ ոչ Սահակ Բագրատունին, ոչ Խորենացու Ժա-
մանակից ընթերցողը, որովհետեւ Խորենացին իւր պատ-
մութեան սկզբում նախապէս մի անգամ ընդմիշտ յալտ-
նել է երկուսին ևս, թէ միակ նորա ազբիւրը Մար—
Աբասն է: Բայց, ինչպէս երևում է, մեր հեղինակը մո-
ռացել է իւր այս ցուցումը և շատ անլաջող պատաս-
խան է տալիս իւր առաջարկած հարցին, թէ նա ինքը
հանել է այս բոլորը «Քաղդէացոց, Ասորեստանցոց և
Պարսից հին գիւաններից, ուր աքունի քարտէզներէ
մէջ մուծած են թագաւորաց անունները և գործերը»...
Նոյն իսկ Խորենացուց մենք գիտենք՝ ինչ երկիրներ է
նա ճանապարհորդել, գիտենք և այն, թէ նա չէ եղել
ոչ Քաղդէացոց աշխարհում, ոչ Ասորեստանում, ոչ Պարս-
կաստանում և թէ հետեւապէս նա չէր կարող տեսնել
ալդ երկիրների գիւանները. նաև մանաւանդ քաղուածնել
անել նոցանից: Եթէ արգարեւ Խորենացին ճանապար-
հորդել էր ալդ տեղերը և անմիջապէս ծանօթացել լի-
շեալ գիւանների գրաւոր լիշտակարաններին՝ յալտն-
բան է նա ալդ արած պէտք է լինէր այն ժամանակ
երբ Սահակ Բագրատունին նորան առաջարկեց գրել Հա-
յոց պատմութիւնը: Բայց ալդ միջոցին Խորենացին հա-
մարեալ հարիւրամեալ ծերունի էր, «հիւանդու»:, ինչ
պէս ինքն է ասում: Այսպիսի հանգամանքներում հա-

զիւ թէ կարելի լինէր Խորենացուն անձամբ այցելել լինեալ երկիրները և անձամբ խոյզ ու խնդիր անել նոցադիւանները:

Խոյն իսկ Առաջին Գրքի 22-րդ գլուխը սկսվում է ալսպէս. «Պարուրից յետու ես կանցնեմ մեր... թագաւորների շարքը՝ մինչև Պարթևաց տէրութիւնը» (ալսինքն՝ մինչև Վաղարշակը). իսկ 31-րդ գլուխի վերջում կարդում ենք. «Վահէից սկսած մինչև Վաղարշակի թագաւորանալը Հայաստանում ես ոչինչ ճշմարտագոյն չեմ կարող պատմել քեզ» (ալսինքն՝ Սահակ Բագրատունուն):

Առաջին գէպքում պատմագիրը խոստանում է Հաղորդել ընթերցողին թագաւորների լիակատար ցուցակը մինչև Արշակունեաց Հարստութեան Հաստատուելը Հայաստանում (150 թ. Քրիստոսից առաջ). իսկ երկրորդում՝ Հրաժարվում է իւր խոստումից. Արդարեւ, նա հասցնում է իւր ցուցակը մինչև Հայկի Հարստութեան վերջին ներկայացուցիչը՝ Վահէ թագաւորը, որ անկաւ պատերազմի մէջ Աղեքսանդր Մակեդոնացու ձեռից (330 թ.), և այլեւս առաջ չ'է գնում. Աղեքսանդրից մինչև Վաղարշակը մնումէ պարապ միջոց 185 տարի *): Այս ահագին ժամանակամիջոցի Համար մեր պատմագրի մօտ

*) 185 տարի է լինում. եթէ Համարենք Աղեքսանդր Մակեդոնացուց մինչև Հայ Արշակունեաց առաջին թագաւորը. 420 տարի—եթէ Հաշուենք Մեծն Տիգրանից (570 թ.) մինչև Վաղարշակը (150 թ.): Այս ժամանակամիջոցում Խորենացին թվում է 7 թագաւոր՝ որոց շաբում և մի Հեթանոսական աստուած՝ Վահագնին: Այդ թագաւորներն են. Վահագն, Առաւան, Ներսէչ, Զարէչ, Արմոդ, Բագամ; Վահն և Վահէ:

մենք նիւթ չենք գտնում, մինչ դեռ, եթէ հաւատանք Խորենացուն, Մար—Աբաս Քաղդէական զրքից արած իւր քաղուածը հասցրել է մինչև Վաղարշակը և նորանից ևս յետոյ մինչև Արտաշէս Ա. (105—90 Քրիստոսից առաջ) սորա պատմութեամբ հանդերձ: Չենք կարծում, որ այսչափ պարապ միջոց լինէր Մար—Աբասի Քաղուածի մէջ, որ մինչև այս տեղ յաջորդաբար աւանդում էր Հնագոյն գարերի պատմութիւնը և որը պակասում է այն ժամանակ միայն, երբ մօտենում է իւր մերձաւոր ժամանակին և երբ մենք իրաւունք ունինք սպասել նորանից անցքերի աւելի մանրամասն նկարագրութիւնը: Եթէ այդ պարապ միջոցը լիրաւի կար Ասորի գիտնականի զբառում, Խորենացին չէր թողնիլ նորան առանց նկատողութեան իւր առաջնորդի երկասիրութեան մէջ: Բայց նա ոչինչ բացատրութիւն չէ տալիս գորա մասին, իսկ պարապ միջոցի պատճառը մեկնում է բանագատութիւնից ստոր ապացուցներով *): Մեր կարծիքով՝ խնդիրը արտեղ շատ պարզ է, Խորենացին երևի թէ իսկական և ոչ թէ կարծեցեալ աղբիւրներում, որոնցից քաղուած էր անում նա մինչև ալժմ՝ չիիշելով նոցա անուները և որոց մենք ցոյց կը տանք իւր տեղում, — Խորենացին, ասում ենք, չէ գտել նիւթ այս՝ գուցէ աննշան ժամանակին վերաբերեալ,

* Օրինակի համար այս ականոյցը Շխոռվութիւն ծագելով՝ իւրաքանչիւրը միայն այն էր մտածում, ինչպէս իշխանութիւն ձեռք բերէ և տիրէ աշխարհին (Հայաստանին), ու Այս տեղից պէտք է եզրակացնել, որ խառն ժամանակները չեն կարող ունենալ պատմիչներ և պատմութիւն:

վասն որոյ նորա պատմութեան մէջ 185 տարի պարապ միջոց է առաջացել:

Նոյն իսկ 22-ըստգ գլխում կարդում ենք «Մարաց թագաւորների ժամանակ» (Վարբակէսից մինչեւ Աժդահակը) կային պսակաւոր արք բնիկք, (այսինքն՝ սկսած Պարոյրից) որոց անունները կ'դրոշմենք ստորև։ Սորանից յետոյ Խորենացին պատասխանում է մի երկրայողի՝ որ կասկած էր տանում, ինչպէս երեւում է նորա առաջիկայ խօսքերից, Հայոց թագաւորութեան գոյութեան մասին Մարաց տէրութեան ժամանակ, Պատմագիրը բոլորովին ՚ի զուր սկսում է ապացուցանել հակառակը։ Նա ասում է. «թէ արդարեւ այն ժամանակ (այսինքն՝ Վարբակէսի և Սարդանապաղի ժամանակից՝ Պարոյրի օրով) կար մեր ազգի թագաւորութիւնը, գորան վկայ է Երեմեա մարգարէն. որ պատերազմի հրաւիրելով Հայերին Բաբիլոնի դէմ, ասում է՝ «բարձրացըրէք դրօշը երկրի վերալ... զինեցէք նորա դէմ ազգերը, հրաման տուէք այլարատեան թագաւորութեան և Ասքանագեան գնդին»... — որով և հաստատվում է, աւելացնում է մեր պատմագիրը, մեր թագաւորութեան գոյութիւնը այն ժամանակ։ — Անհիմն եզրակացութիւն է անում Խորենացին։ Եւ լիրաւի, միթէ զարմանալի չէ տեսնել և կարգալ նորա գըչից դուրս եկած այսպիսի մի ապացոյց։ Կարո՞ղ էր արգեօք մէկը և. դարում կասկածել Հայոց թագաւորութեան գոյութեան մասին լիշեալ ժամանակում։ Եթէ նա արգարեւ ունէր իւր ձեռում Մար—Աքասի պատմութիւնը, դժուար չ'էր նորան մատնացոյց լինել ուղղակի իւր առաջնորդի վերալ և նոցանից վկայութիւն առաջ բերելով, ստիպել երկրա-

յողին, որ լռէ և ոչ թէ մէջ բերէր Երեմիա մարգարէի խօսքերը, որ հարևանցի կը նկատենք, չէր կարող լինել Բ. գարի միջին (Սարդանապաղ 759 թ.), որովհետև նա ապրել է Ե. գարում (640—590 թ.): — Այստեղ, որպէս և այլ տեղերում, Խորենացին իւր լօժար կամքով Հնարող է գառնում: Քաղդէական Գրքի Քաղուածը նա համարում է իրքւ իսկապէս եղած, մինչդեռ՝ ինչպէս երևում է, այդպիսի զիրք նորա մօտ երբէք չէ եղել:

Նոյն Առաջին Գրքի 32-րդ գլխում ընթերցողը անակնկալ հանդիպում է Զարմալրին՝ 29-րդ նահապետին Հալկից սկսած: Խորենացու գրուածում Հալկազունեաց ազգաբանութեան մէջ այս անձնին լաջորդաբար հետեւում են գարձեալ ։ Նահապետ և 17 թագաւոր: Մեր պատմագիրը հաւատացնում է, որ նա միջոց չունեցաւ խօսել ալդ գիւցազնի մասին իւր տեղում և իւր անփութութեան լանցանքը ձգում է իւր մեկենասի վերալ. «Քո շտապեցնելու շնորհիւ, ասում է նա գառնալով դէպի Սահակ Բագրատունին, մենք գեռ ևս ոչինչ չկարողացանք ասել ոչ (Աղեքսանդր) Մակեդոնացու և ոչ Խլիական պատերազի մասին»: — Հարցնելու է. ինչպէս արդեօք չկարողացաւ նա իւր տեղում խօսել Տրովացոց պատերազմին մասնակցող՝ Զարմալրի վերալ, քանի որ նորա ձեռումն է Մար—Աբասը, որ ժամանակագրական կարգով թվում էր Հալկազունեաց բոլոր նահապետներին և թագաւորներին նոցա հարստութեան սկզբից մինչև վերջը: Այստեղ «շտապեցնելը» չէ կարող արդարացնել Խորենացուն: Պարզ է, որ նա իւր հալրենեաց Հնագոյն պատմութիւնը, որպէս և Զարմալրի վերալ մէջ բերածը, քաղում էր զանազան աղբիւրներից և ոչ

թէ Մար—Աբասից, ուստի և առաջ եկան բոլոր արա
անձտութիւնները և մոռացումները:

Ցիշեալ 32-րդ գլխին նախընթաց 9 գլուխներում
ամենեին մի խօսք ևս չ'կայ Մար—Աբասի մասին: Նո-
ցա մէջ բոլոր պատմածը ներշնչուած է կենդանի, վառ-
վուուն աշխոյժով և քաղուած է մեր պատմազրի ձեռով
այլ աղբիւրներից, որոնց մենք միառմի կը լիշենք
ներքեւում:

Երկրորդ գրքի 7-րդ և 8 րդ գլուխները նուիրած
են Վաղարշակ թագաւորի գործունէութեանը. նորա կա-
ռավարչական կարգադրութիւնները Հայաստանի գահը
բարձրանալուց յետոյ, նորանոր օրէնսդրութիւնները,
աւատական կարգեր սահմանելը, բազմաթիւ նախարա-
րութիւններ հաստատելը. այս բոլորը որպէս և Արծ-
րունեաց և Գնունեաց ցեղերի պատմութիւնը, արքու-
նի գրան համար չորս գունդ պահապան կարգերը, ներ-
քինիների նահապետի պաշտօն նշանակելը, Սիսակի,
Ռւտիացւոց, Գարգարացւոց իշխանութեան, Սլաք նա-
հապետից առաջ եկած՝ Ալկունեաց ծագումը—պատմա-
գերը հիմնում է «Հին զրոյցների և աւանդութիւնների»
և ոչ թէ Մար—Աբասի Քաղուածի վերայ: Թէև Երկ-
րորդ Գրքի 9-րդ գլխի վերջում Խորենացին հաւատաց-
նում է, որ մինչև ալստեղ նա իւր առաջը ունէր Ա-
սորի ծերունու Քաղուածը, սակայն չ'է կարելի թոյլ
տալ՝ օրինակ, ալսպիսի մի ժամանակի կանխումն (ան-
քրոնիզմ), որ Քաղդէական Գրքի մէջ (Մեծին Աղեք-
սանդրի ժամանակ, եթէ նորանից ևս ոչ առաջ) լինէր
հայ Արշակունեաց հարստութեան հիմնադրի պատմու-
թիւնը. այսինքն՝ որ ալդ գրքի մէջ 150 թուականի

անցքերը տեղի ունենալին իբրև կատարուած իրողութիւններ գեռ. 330 թ:

Բացի Արիւդենոսից մէջ բերած վկայութիւնից՝ այն ևս առասպելական, Երկրորդ Դրքի ըուլոր 9 զԼուխները հիմնուած են ազգային աւանդութիւնների, զրուցների, տեղ-տեղ պատմական երգերի վերար. Վերջ ՚ի վերջոն երեսում է, որ այս տեղ ևս ՚ի զուր է տալիս մեր պատմագիրը Մար—Արասի անունը, որովետեւ նա արդէն ուղղակի իւր կողմից է խօսում, մի կողմ թողնելով ռուշին: Ասորուն: Ալստեղ ամեն մի քայլափոխում մենք հանդիպում ենք ալսպիսի ասացուածների. «գ ը ե մ, գ ի տ ե մ, ա ս ե մ, ե թ է ի ն ձ շ ա զ ա կ ը ա տ չ համար ես, ո ր ոլ է ս լ ս ե մ, թէ որպէս և ուր սորա (հայրիշխանի) իբք անցին անլիշատակելի՝ ես ոչ գ ի տ եմ:— Ա յ լ մ ո ո ա ց ա ք և զ զ ժ ն ե ա լ Ա լ ա ք ն .— բ ա լ ց զ ա լ ս գ ի տ ե ա, զ ի զ ց ե զ ս զ ա լ ս մ ե ծ և ա ն ո ւ ա ն ի՝ մ ո ո ա ց ո ւ մ ն ե զ ե մ ե զ ե զ յ լ լ ո ւ ա ջ ի ն մ ա տ ե ն ի ն ի լ ի շ ա տ ա կ ե լ՝ զ զ ո ւ ն դ ս Ա խ ա կ ա ն .— ի ս կ զ մ շ տ ո ւ ն ի ս և զ Դ ո ղ թ ն ե ց ի ս զ տ ի ո լ ա տ մ ե ա լ ՚ի Ս ի ս ա կ ա ն է ն հ ա տ ո ւ ա ծ :— Ո՞չ զ ի տ ե մ, թէ լ ա ն ո ւ ն ա ր ա ն ց ն զ ա ւ ա ռ ո ւ ս ն ա ն ո ւ ա ն ն ե ն և թէ լ ա ն ո ւ ն զ ա ւ ա ռ ա ց ն զ ն ա խ ա ր ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ս ն կ ո չ ե ց ե ա լ *):

Ալսպիսի ոճերը կը գործադրէ միայն ինքնուրոյն հեղինակը, զայց ոչ թէ ժողովողը, որպէս դիտմամբ ցուց է տալիս իրեն Խորենացին Մար—Արասի վերաբերժամբ:

Դարձնենք վերջապէս ընթերցողի ուշադրութիւնը այն հանգամանքի վերար, որ ըստ երեսութիւն աննշան

է, բայց իսկապէս նշանակութիւն ունի: Ալդ Հայոց լատուկ անուններն են՝ նահապետների, թագաւորների, իշխանների, երկիրների, գաւառների, քաղաքների, զիւղերի, գետերի, լեռների և այլն, որք՝ սկզբում զրուելով Քաղգէական Գրքի մէջ, ապա փոխագրուելով Յոյն և Ասորի լեզուների, պահպանում են իրանց ազգալին կերպարանքը և արտասահութիւնը ալնախի լսակութեամբ, որ Խորենացին առանց մի դժուարութեան ճանաչում է նոցա հայկական ծագումը և դնում է իւր պատմութեան մէջ: Այսպիսի մի երևոյթ, լայտնի բան է, անկարելի է թոյլ տալ, եթէ նկատողութեան առնենք՝ թէ ինչ դժուարութեամբ է լինում Հայոց հրնչիւնների տառադարձութիւնը լիշեալ լեզուների նշանագրերով: Մենք համոզուած ենք, որ այս անունները Խորենացին հանել է ուղղակի Հայոց աւանդութիւնների ժողովածուներից:

Ցոյց տալով Խորենացու հակասութիւնը իրեն և Մար—Արասի կարծեցեալ ընազրին, կ'առաջարկենք վերջապէս վերջին հարցը. արգեօք լիբաւի[○] գոյութիւն ուներ Վաղարշակի՝ մինչև անդամ Մեծին Աղեքսանդրի՝ ժամանակ Նինուէ քաղաքը: Այս մասին պատմութիւնը տալիս է բացասական պատասխան: Արդարեւ, Նինուէն աւերուեցաւ 625 թ. Կոււաքսի (Կիակսարի) ձեռով Ասուր—կղիլ—Իլանի թագաւորութեան օրով: Իւր անկումից յետոյ Նինուէն այլ ևս չ'վերականգնեցաւ և շուտով մոռացան նորա գոյութիւնը, ալնակէս որ 200 տարի յետոյ կարելի չ'էր որոշել մինչև անդամ նորա տեղը *): Չ'նա-

86. G. Maspero—Histoire ancienne des peuples des l'Orient, Paris, 1875, p. 476—477.

լելով որ 300 տարի Աղքասանդրից և 475 տարի Վաղարշակից առաջ Ասորեստանը իւր մայրաքաղաքով հանդերձ իջաւ պատմական բեմից, Մովսէս Խորենացին հաւատացնում է, որ Նինուռէն շարունակում էր իւր գոյութիւնը 150 թ. Քրիստոսից առաջ: Եթէ Աղքասանդրի և Վաղարշակի ժամանակ չ'կար Նինուռէն, ապա ուրեմն ըստ ինքեան հասկանալի է, որ Նինուռէի հոչակուած դիւանի մասին խօսք ևս չ'է կարող լինիլ Ալսպէս՝ թէ՝ Նինուռէն, թէ՝ նորա դիւանը գառնում են լոկ երևակալութիւն: Այն ժամանակ և՝ Քաղղէական Գիրքը, և՝ Նորան Աղքասանդրի հրամանաւ Քաղղէարէնից Յունարէն թարգմանելը, և՝ Մար—Աբասի ձեռով նորա մի մասը Ասորերէնի փոխադրելը, —այն մասը, որ բովանդակում էր Հայոց հնագոյն պատմութիւնը, և՝ այդ թարգմանութիւնը Վաղարշակին ներկալացնելը, և՝ նորան արքունիքում պահելը, և՝ նորա մի մասը արձանի վերալ դրօշմելը, վերջապէս և՝ Հայոց թագաւոր Վաղարշակի Արշակի հետ ունեցած գրագրութիւնը,—այս բոլորը ոչ այլ ինչ են, բայց միայն Մովսէս Խորենացու շինածը, հնարածը. այն ժամանակ և «ուշիմ» Ասորի Մար—Աբասը կերևի մեզ երբէք չ'եղած և Հայոց պատմութեան Հօր մտքի ծնած մի անձնաւորութիւն:

Մեր ժամանակը ոչ մի պատմիչ, որ փոքր ՚ի շատէ ճանաչում է իւր պատիւը, չ'ի գործ դնել լիշեալ միջոցը՝ իւր աշխատութեանը աւելի հեղինակութիւն տալու նպատակաւ: Ալլապէս էին նալում ալդպիսի միջոցների վերալ Քրիստոնէութիւնից առաջ, Քրիստոնէութեան առաջին և հետևեալ գարերում: Այն ժամանակ ամենայն ինչ, որ լոյս էր տեսնում կեղծ անունով (պատմութիւն)

մեծ լարգ ունէր և ալդ կեղծ անունները մի սովորական երևոյթ էր։ Ենորհիւ ալդ տարօրինակ ուղղութեանը, որ առաջ եկաւ Պաղեստինում և մանաւանդ Աղեքսանդրիայի գլորցի գիտնականների մէջ, մեծ քանակութեամբ պատրաստում էին այն ժամանակուայ լուսաւորեալ աշխարհի այս կետրոնում ամենալին տեսակ պատմական, խորհրդաւոր (միստիքական), մարգարէական զրուածներ, որք ալստեղից տարածվում էին բոլոր այն ժամանակուայ լուսաւորեալ աշխարհը։ և շատերի, եթէ ոչ բոլորի կողմից ընդունելութիւն էին գտնում՝ եբրև ճիշտ, իսկական հեղինակութիւններ։ Եւ այս միջոցը չ'էր համարվում այն ժամանակ գատապարտելի։ Այսպիսի զրուածների հեղինակները նպատակ ունէին ազդել ժամանակակից հասարակութեան վերա՛ յօդուտ իրանց քարոզած քաղաքական, կրօնական, պատմական և կամ այլ գաղափարի։ Այս նպատակը, նոցա համոզմունքով, բարի էր, ուստի արդարացնում էր միջոցը։ Այդ նպատակին հասնելու համար գործ էին գնում որոշ հնարներ։ Որպէս զի աւելի կշիռ տան իրանց շարադրութիւններին, լոյս էին ընծայում նոցա մի լայտնի, հոչակուած անունով, և կամ մի հնարած, մտացածին անձնաւորութեան անունով։ — իսկ զրուածի լաջողութիւնը թողնում էին նորա ներքին արժանաւորութեանը։

Հայաստանը՝ հաւասար հին աշխարհի միւս քաղաքակրթեալ ազգերին, որոց հետ նա միշտ հաղորդակից էր, ունէր նոյնպէս իւր կեղծ—անուն զբականութիւնը։ Այդ զբականութեան բովանդակութիւնն էր՝ ի միջի այլոց, իւր ներքին՝ մտաւորական կեանքի երեսոյթնե-

ըը։ Քաղդէական Գիրքը, թէև կարծեցեալ, ալէտք է դասուի ալդ տեսակ գրուածների շարքը, իսկ Մար—Աբասը՝ մտացածին անձնաւորութիւնների կարգը։

Ալս՝ այն ժամանակուալ դպրոցի Բաւականին տարածուած ուղղութեանը Մովսէս Խորենացին՝ իբրև իւր դարու որդի, հատուց իւր հարկը, հնարելով իւր կողմից Մար—Աբասին և Քաղդէական Գիրքը։ Նա գիմեց ալս միջոցին, ի նկատի ունենալով աւելի հաւատ և վստահութիւն գրաւել իւր հալրենակիցների կողմից զէպի Հալկի և նորա հարստութեան պատմութիւնը։ Նա կարծում էր, և բոլորովին արդարացի, որ եթէ ալդ պատմութիւնը գրէ իւր հալրենիքում իսկապէս գոյսւթիւն ունեցող աւանդութիւնների համաձայն, նորադարձ հայ ժողովուրդը կարող է մերժել նորան՝ իբրև անբարիշտ հեթանոսական աղբիւրներից առաջ եկած մի գրուած։ Ուստի Խորենացին նեկալացնում է իւր հալրենեաց սկըզբական պատմութիւնը ոչ միայն հանած Նինուէի գիւանից, այլ և սրբագործած Սուրբ Գրքով, որով հետեւ նա առաջ է բերում Հալոց առաջին նահապետին Յաբէթից՝ Թորգոմի միջոցով։ Ալսպիսի ընթացքը մանաւանդ անհրաժեշտ էր, որ նորադարձ Հալերը ոչ միայն Խորենացուց առաջ, այլ և նորա ժամանակը ևս զզուանքով էին նայում Հալոց հեթանոսական վիպասանութեան վերայ։ Մենք այս երեսոյթը նկատում ենք Դ. և Ե. գարերում քրիստոնեալ ժամանակիրների գրուածների մէջ, երբ որ նոքա նկարագրում են Հալոց իշխանների աղմկալից խնջուքները, որ հնչում էին վիպասանների երգելը *):

*). Փաւատոս Բուզանդացի, դպրութիւն Գ. Գ. 13. էջ 223. Եղիշէ. Վենետիկ, 1842. Եղանակ Գ., էջ 108.

Հասկանալով, որ ժամանակակիցները չեն համակրիլ հեթանոսական զրոյցներին և աւանդութիւններին և չկամենալով վտանգի մէջ ձգել իւր պատմական աշխատութեան լաջողութիւնը, — Խորենացին դիմում է կեղծիքի. ազգային Վ.Էպերից արած քաղուածները նա առաջարկում է իւր ընթերցողներին իբրև Նինուէի դիւանի Քաղդէական Գրքից արտագրած պատմութիւն, որ զրաւել է իւր վերալ Մեծին Աղէքսանդրի ուշագրութիւնը, — և նոքա ընդունում են ալդ քաղուածները իբրև լիովին արժանահաւատ պատմութիւն՝ մանաւանդ իւր հնութեամբը:

Այն պարագան, որով լոյս է տեսնում Հալոց սկըզբնական պատմութիւնը, պէտք է հիանցէր ոչ միայն Սահակ Բագրատունուն, այլ առ հասարակ և՛ իւր ժամանակակիցներին, — որպէս և եղաւ իսկապէս։ Եւ Խորենացին հասնում է իւր նպատակին. նորա Հալրենակիցների մէջ հաստատվում է այն հաւատը, թէ լիրաւի գոյութիւն են ունեցել Մար—Աբասը և Քաղդէական Գիրքը։ Եւ եթէ ալդ համոզմուքը չ'մնաց ընդ միշտ, ինչպէս՝ երեւի թէ՛լոյս ունէր Հալոց պատմութեան հալրը, գոնէ՛ նա տեսեց շատ երկար ժամանակ։ Այսպէս՝ մենք զալիս ենք այն եղրակացութեան, ոչ Մար—Աբասը, ոչ Քաղդէական Գիրքը, ուրեմն և՛ ոչ նորա մէջ բովանդակած Հալոց սկըզբնական պատմութիւնը երբէք գոյութիւն չ'են ունեցել։

Մեզ կը հարցնեն. որտեղից ուրեմն Մովսէս Խորենացին քաղել է աւելի քան 2000 տարուայ պատ-

մութիւնը՝ սկսած է առ օ ն ի մ *) Հայկից մինչեւ ար-
շակունեաց հարստութեան Հայաստանի գահ բարձ-
րանալը:

Բ.

Կ պատասխանենք. ժողովրդական վիպասանութիւ-
նից, վիպասանների Երգերից, Թուելեաց Երգերից, Մե-
հենական պատմութիւնից, թագաւորաց Մատենից, այլ
չենք ասում առասպելներից, զրոյցներից և աւանդու-
թիւններից: Ամփոքենք մեր ուշադրութիւնը այս ժո-
ղովրդական աղբիւրների վերայ, որոց մասին հարեւան-
ցի լիշում է Խորենացին, որ մի՛ գուցէ կորուսանէ իւր
գիտնական պատմական գրուածի վարկը իւր նորագարձ
հայրենակիցների առաջև: Մի մարդ, որ կատարելագոր-
ծել էր իւր մտաւորական կրթութիւնը այն ժամանա-
կուայ Եգեսիոյ, Աթէնքի, Աղեքսանդրիայի հռչակաւոր
դպրոցներում, որ գիտէր թէ որպիսի կարևորութիւն են
տալիս այդ գպրոցներում ժողովրդական վիպասանու-
թեանը,—լաւ էր հասկանում է գորա խորհուրդը, մա-
նաւանդ մի հին ազգի պատմութեան վերաբերմամբ.
ուստի իւր Պատմութեան Առաջին Գրքի մէջ նա ըն-
դարձակ տեղ է տալիս այդ վիպասանութեանը, միալն
քողարկելով նորան Մար—Արասի, Մեծին Աղեքսանդրի,

*) Է առ օ ն ի մ այն անձն է, որոյ անունով կոչւում է ամ-
բողջ ազգը:

նուէի դիւանի Քաղդէական Գրքի անուններով։ Յոյց
ոլով մեր ներկայ Քննութեան սկզբում Քաղդէական
քի կեղծ լինելը, մենք ՚ի նկատի ունէինք հերքել
և ալլազգի—Քաղդէական ծագումը,որ սխալմամբ վերա-
ած է Հայոց Պատմութեանը և որը մինչև այսօր հա-
րում ունի Հայ և եւրոպացի գիտնականների առա-
։ Մենք կամէինք վերականգնել արդ պատմութեան
ւն՝ ազգային աղբիւրը։ Ներքելով Մար—Աբասի և
բա Պատմութեան գոյութիւնը, մենք չկամէինք պար-
ուել մեծ պատմագրի ստուերը, Հակառակը՝ գորանով
նք մեծ վաստակ էինք վերագրում նորան, ինչպէս մի
որդու. որ ՚Ի. և Ե. գարերի շատ Հայ պատմագիր-
քից միայն յոյց տուեց իւր Հայրենեաց սկզբնա-
ն պատմութեան իսկական աղբիւրը։ Սորանով նա
ահեց մեզ՝ իւր յետագայ Հայրենակիցների Համար
նգին նշխարներ ալն վսեմ ազգային Վէպերի, որոց
նգառնալի կորստի Համար չէ կարող չցաւել Հայ
զգը։

Դառնանք դէպի վիսլառանների երգը, Մովսէս
որենացու Հայոց Պատմութեան մէջ մենք Հանդիպում
նք մի շարք բառերի, որք մինչև վերջին ժամանակնե-
լը մնում էին անհասկանալի և չէին մեկնում այնպէս,
ինչպէս գործ էր ածել նոցա Խորենացին։ Ուշիուշով
ուսումնասիրելով այն տեղերը, ուր նա ալդ բառերն է
գործ ածում, մենք կարողացանք վերականգնել նոցա
սկզբնական հնագոյն նշանակութիւնը։ Այնուհետև մի-
անգամից լուսաբանուեցան Խորենացու Պատմութեան
այն կէտերը և Հատուածները, որոց մէջ նոքա պատա-
հում էին։ Հայ գիտնականները և եւրոպացի Հայագէտ-

ները ընդունեցին ալդ բառերին *) տուած մեր մեկն թիւնները, համոզուելով որ, լիրաւի լիշեալ հատուան ներում ծածկաբար պահուած են վիպասանները երդի հանած իսկական հատուածներից, կամ ալդ հատուածների արձակ ոճի դարձրած բովանդակութիւնները, ոչ բնագրին շատ մօտ են: Այսպէս՝ Վ.Էպերի մի ամբողջ ջանի (ԱԿԱԴ.) գոլութիւնը հեթանոս Հայաստանու դարձաւ մի իրողութիւն, որոյ մասին ոչ ոք ափէ չի կասկածում:

Հինգերորդ դարում Գողթնեցի Երգիչների բերանի գեռ լսվում էին, ինչպէս Խորենացին ասում է, վիպասանների երգեր, որք՝ զգուշութեամբ հաւաքուած լինելով, պահվում էին արքունի դիւանում: Բոլոր Հայկազունեաց հարստութեան պատմութիւնը մինչև Մեծ Աղէքսանդրը մնում էր ալգալիսի «Մատեանների» մէջ, «Թուելեաց երգերի» մէջ, որք երեկի թէ, նման էին Շահնամէին: Այս բազմահատոր վիպասանութիւնը, որպէս

*) Ա.Հ. այդ բառերից մի քանիսը.

1) Ա. է պ. որ լիովին համապասխան է յունաց է պ ռառին:

2) Ա. ս ե մ: որ հնումը համանշան էր երգեմբառին ռաստի վիպասան նշանակում է վէպ երգող, երգիչ:

3) Գ ու ս ա ն—այսպէս կոչվում էին Հայաստանու քրիստոնէութիւնից առաջ ժողովրդական երգիչները:

4) Բ ա ն ա ւ. ո ր և Թ ու ե լ ե ա ց երգեր. Բանասայսինքն—բերանացի, անգիր. թուելեաց՝ այսինքն այնպի երգեր, որք ժամանակագրական կարգով թւում: համարուին թագաւորների և իշխանների արարքը:—Վ.Էպեր Հայաստանի, 1850 Մոսկվա:

Հայտնի է ամփոփում է իւր մէջ պատմական երգեր, որոց ժողովել է պարսից Բանաստեղծ Ֆիրդուսին և դասաւորել ժամանակագրական կարգով՝ այսինքն՝ իւրաքանչիւր տարին, թագաւորը և իւրաքանչիւր թագաւորի իշխանութեան ժամանակը:

Հայոց Վէպերը իրենց բովանդակութեամբ բաղկացած էին՝ միտ գնելով մեզ հասած հատուածներին, Ա., այնպիսի երգերից, որոց նիւթը կազմում էին Հայկի հարստութեան նահապետների և թագաւորների արարքը¹⁾. Բ, երգերից, որք գովարանում էին գարձեալ Հայոց թագաւորների քաջագործութիւնները՝ միայն Ասորոց աստուծոյ և հսկաների հետ ունեցած կռուի մէջ²⁾). Գ, երգերից, որոց մէջ նկարագրուած էին Ասորեստանեալց արշաւարքը և նոցա պատերազմները Հայերի դէմ³⁾). Դ, երգերից, որոց նիւթն էին հայ վիպաս սնների երգած Մարաց զրոյցները⁴⁾: Բացի բուն՝ պատմական երգերից, կալին և Ն, գիւցարանական երգեր, որոց բովանդակութիւնն էր աստուածների և գիւցագնների ծնունդը՝ իրենց մեծագործութիւններով հանգերձ⁵⁾), որոց մասին կը խօսենք իւր տեղը:

Ենթագրաբար որոշելով մեզ հասած հատուածներից այս երգերի զլխաւոր բովանդակութիւնը, կը նկատենք, որ դոքա ընդարձակ երգեր էին կամ՝ աւելի ճիշտ

1) Պ. Ա. Պ. 10—11

2) Պ. Ա. Պ. 13—14

3) Պ. Ա. Պ. 15—16, 17 և 18

4) Պ. Ա. Պ. 24—31

5) Պ. Ա. Պ. 9, 31.

ասած, Վէպեր: Նոցա ամբողջութիւնը, ընդարձակութիւնը և կարգաւ գասաւորութիւնը պարզ երեսում է, մասնաւանդ Խորենացու պատմութեան մի քանի հատուածներից: Մանրամասն խօսելով գերի տարած Մարաց տեղաւորելու մասին, որոց Հայաստան էր բերել Մեծն Տիգրանը Աժտահակին լաղթելուց լետով, պատմագիրը աւելացնում է. «այս խօսքերի ճշմարտութիւնը հաստատում են և թուելեաց Երգերը, որոց՝ ինչպէս լսում եմ, պահեցին ախորժելով գինաւէտ Գողթան զաւառի ընակիչները: Նոցա մէջ շարահիւսած են Երգերի խօսքերը Արտաշէսի և նորա որդոց վերայ և այլաբանաբար լիշվում է Աժդահակի սերունդի մասին, որ Վիշապագունք էր կոչվում²⁾:»

«Այլ և ասում են (Երգերի մէջ), որ Արգաւաննը Արտաշէսի համար ճաշ է պատրաստել և վիշապների ապարանքում որոգալիթ է լարել նորա գէմ³⁾:»

«Նոյնպէս՝ թէ Արտաշատի հիմնարկութեան ժամանակ Արտաշէսի քաջ որդին՝ Արտաւազդը, չ'զանելով տեղ (իւր) ապարանքի (շինութեան) համար, գնաց, ասում է Երգը, Մարաց մէջ ապարանք շինեց Մարակերտ անունով՝ Շարուր կոչուած դաշտի վերայ⁴⁾:»

«Այլ և տենչալ, ասեն Աաթենիկ Տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ՚ի բարձիցն Արգաւանայ⁵⁾:»

¹⁾ Գր. Ա. Գլ. 30.

²⁾ Գր. Ա. Գլ. 30.

³⁾ Գր. Ա. Գլ. 30.

⁴⁾ Բնագիրը՝ զժուարութեան և վիճելի լինելու պատ-

Ալս մի քանի հատուածները մեծ լոյս են սփռում այն խնդրի վերալ, թէ ո՞րքան ընդարձակ էին Հայոց Վ.էպերը։ Որովհետև նոցա մէջ լիշած են այնպիսի անցքեր, որք կատարուել են ալլեալ ժամանակ, օրինակ՝ Մարաց գերութիւնը եղաւ 565—570 թուերին Քրիստոսից առաջ, Տիգրան Ա.-ի և Աժգահակի օրով։ Արտաշէս Բ, Արտաւազդ Բ և Մարաց նահապետ Արգաւանը ապրել են 85—130 թ. Քր. լետով։ Ալս անցքերի և անձների համառօտարաբար թուելը, որ ոչ այլ ինչ է, բայց միայն վիստասանական Երգի մի մասը,— ցոյց է տալիս այդ Երգի Ընդարձակութիւնը, որովհետև նորա բովանդակութիւնը՝ ինչպէս երեւում է, էին Մարաց և Հայոց մէջ անցած անցքերը 700 տարուայ շրջանում։ Երգի ընդարձակութեան մասին մենք աւելի կը համոզուինք, եթէ լիշենք, որ Մեծն Տիգրանից առաջ կար ամբողջ շարք Հայկազունեաց թագաւորների, որք աւելի քան տասնուշինգ գար իշխում էին Հայաստանում և որոց արարքը՝ ինչպէս կրտեսնենք ստորև, երգիչների համար նիւթ գառնալով, կազմում էին «Վիպասանաց Երգի» մի մասը։ Ալս Երգի մէջ տեղի ունէին նաև Արշակունեաց թագաւորների, մեծանուն նախարարական ցեղերի և ալլոց երեւելի գործերը։

Ապացուցանելով Վ.էպերի գոյութիւնը Հայաստա-

Ճառաւ թողինք անթարգման, թէև միտքը ընդհանրապէս հասկանալի է.—Այս հարցին հետաքրքրողները կարող են դիմել Պրոֆ. Գ. Պատկանեանի «Материалы для арм. словаря, вып. I и II Спб.»

նում և մերձաւորապէս գաղափար տալով նոցա ընդարձակութեան և ամբողջութեան մասին, ալժմ ցոլց տանք և վերականգնենք նոցա այն հատուածները, որք պահուել են Հայոց Պատմութեան Հօր երկասիրութեան մէջ:

Խորենացու Պատմութիւնը սկսվում է Սահակ Բազրատունուն ուղղած նուերով: Սորանից յետոյ պատմագիրը Հաղորդում է առհասարակ իւր հայեացքը իւր ժամանակի պատմական յիշատակարանների մասին, որոնցից գերադաս է Համարում յունական աղբիւրները: Ֆյնուհետե նա վելալութիւններ է մէջ բերում Արիւգենոսից, Բիւռոսից և վերը յիշած միւս Հին պատմիչներից, որք ոչինչ չ'են խօսել բուն Հայոց պատմութեան վերալ: Վերջապէս 8-րորդ դլխից սկսած մինչև 32-րդը նա ներկալացնում է Հայաստանի հնագոյն պատմութիւնը՝ առաջնորդ ընտրելով իրեն երբէք գոլութիւն չունեցած Մար—Արասին:

Դ.

Հայկական Վիպասանութիւնը սկսվում էր գիւցաբանական աւանդութիւնով. դորա մէջ Հանգէս էին դալիս առաջին աստուածները և նոցանից առաջացած հսկաները, որք մարտնչում էին դոցա գէմ, ինչպէս երբեմն Տիտանները—Զեսի գէմ: Ալդ աւանդութեան բովանդակութիւնը, ինչպէս որ էր առհասարակ հին ազգերի մէջ, կազմում էին աստուածների ծնունդը և աշխարհի սկիզբը, որ յալտնի երեւում է առաջիկայ երկու կարճ հատուածներից: Ափսոս, որ Խորենացին

շատ սակաւ է մէջ բերում ալդ աւանդութիւնից, որոյ
նախերգանքն է միայն նա մեզ հաղորդում, թէև նոյն
իսկ աւանդութեան խօսքերով, բայց փոխելով նորա չա-
փաբերական ձեւը: Չնայելով ալդ նախերգանքի համա-
ռօտութեանը, այնու ամենալինիւ նորա մէջը մենք տես-
նում ենք մի տեսակ կապ՝ տւելի ճիշտ ասած, ազգակ-
ցութիւն հայկական գիւցաբանութեան Բարելոնականի
հետ. ալդ երեւում է նորա մի քանի աստցուածներից:
Առաջ ենք բերում ալդ հատուածը, որով՝ երեւի թէ,
սկսվում էր լիշեալ գիւցաբանական աւանդութիւնը:

«Ահեղ և երեւելի էին առաջին աստուածները, աշ-
խարհիս մեծամեծ բարիքների սլատճառները. աշխարհի
և բազմամարդութեան սկիզբը դարձեալ նոցանից է:
Նոցանից առաջացաւ անհետեղ, լաղթանդամ և վիթ-
խարի հսկաների ցեղը: Նոքա ամբարտաւանութեամբ
լրանալով՝ ծնան աշտարակաշինութեան անբարիշտ խոր-
հուրդը և նորան զլուխ հանելու ջանացին: Բայց աս-
տուածների բարկութիւնից բարձրացած ահազին հողմը
ցրուեց աշտարակը և մարդոց անլուր լեզուներ տրուե-
ցան, որով աղմուկ և շփոթ անկաւ նոցա մէջ: Ալդ
հսկաներից մէկն էր և՝ Յաբեթեան Հայկը՝ անուանի,
կորովածիդ և հաստաջիդ քաջ նախարարը *):

Միւս հատուածը պահպանուել է չափաբերական
ձեւով: Նորա մէջ բանաստեղծօրէն նկարազրուած է
Հայոց աստուած՝ Ա.ահազնի, հրաշալի ծնունդը ալսպի-
սի խօսքերով.

*.) Գր. Ա. Գլ. 9:

ւ Երկնէր Երկին և Երկիր.

Երկնէր և ծիրանի ծով.

Երկն ՚ի ծովուն ունէր

Զկարմրիկ եղեգնիկն.

Ընդ եղեգան փող, ծուխ ելանէր:

Ընդ եղեգան փող, բոց ելանէր,

Եւ ՚ի բոցոյն պատանեկիկ վազէր,

Նա հուր հեր ունէր,

Ապա թէ բոց ունէր մօրուս՝

Եւ աչկունքն էին արեգակունք¹⁾ :

Այս մի ընդարձակ դիւցաբանական երգ էր, ինչ-
պէս երեսում է Ա. Գր. 31 գլխում Խորենացու մէջ բե-
րած նորա բովանդակութիւնից. «Ե բ գ ի մէջ լիշվում
էր, ասում է Խորենացին, Վահագնի կռիւը Վիշապնե-
րի հետ և նորա յաղթութիւնը: Նորա վերալ բոլոր եր-
գածը շատ նմանութիւն ունէր Հերակլէսի քաջագոր-
ծութիւններին: Այլև ե բ գ ու մ է ի ն նորա աստուա-
ծանալու մասին. Վրաց աշխարհում հասակի շափով
արձան կանգնեցին նորան և զոհ մատուցանելով՝ պաշ-
տում էին նորան»:

Մեր հեղինակի այս խօսքերին նայելով, կարելի է
ենթադրել, որ ալդ Երգի մէջ իրենց պատշաճաւոր տեղն
էին բռնում և Հայոց պանթէոնի (համագից մեհեան)՝
միւս աստուածները:

Մենք տեսանք, որ վերոյիշեալ հատուածներից ա-
ռաջինը «Հսկաների» դարում ապրող մարդկանց թւում
համարում էր և դիւցազն էպօնիմ՝ Հայոց առաջին նա-

¹⁾ Գր. Ա. Գլ. 31:

Հապետ՝ Հայկին: — Ալսուհետեւ Խորենացին սկսում է ընդգրձակ քաղուածներ անել վիպասանների Երգից, որոց մէջ առաջին անցքը՝ ինչպէս որ պէտք էր սպասել, բռնում է Հայկը, նորա Խաբելոնից Հայաստան գաղթելը, Բելի հետ ունեցած պատերազմը, այդ երկը բնիկներին իրեն հապատակեցնելը: — Այս հատուածներում ընթերցողը հանդիպում է այնպիսի դարձուածների, ածականների և նկարագիրների, որք յատուկ են ժողովրդական Վիպասանութեան: Այս՝ որպէս և այլ փոխարինած քաղուածներում, մեր պատմագիրը խանգարում է Երգերի չափաբերական ձեր և վիպասանների բանաստեղծական պատմութիւնը աւանդում է արձակ ոճով:

Ալսուհես են՝ օրինակի համար, Հայոց նահապետի արտաքին նկարագրութեան վիպասանական նախերգանքը, որպէս և նորա արարքների նկարագրութիւնը:

« Այս Հայկը՝ գեղապատշաճ, անձնեալ, խալտակն, քաջագանգուր ¹⁾), հաստաբազուկ, հսկաների մէջ երևե-

¹⁾ Բնագրի մէջ դրած է «քաջագանգուր»: — Միիթարեանների մեծ բառարանում այդ խօսքը բացատրած է: «քաջագուր հերովք», «աղեկ գոռովզ»: «Քաջագանգուր» բարդ բառ է ու կազմուած է «քաջ—որ է ոգի՝ հեթանոս Հայերի պաշտած աստուածներից մէկը» և «գանգուր» բառից: Աւստի այս տեղ մենք հասկանում ենք «աստուածային գանգուր», աստուածների գանգուրի նման գանգուր ունեցող»: Հայկազունի նահապետներին և թագաւորներին անուանում էին «քաջ»—այսինքն «ոգի», աստուած»: իսկ թագուհիներին՝ «տիկին» այսինքն՝ աստուածուչի: Երշակունեաց թագաւորները գեռ իրենց կենդանութեան ժամանակ կոչվում էին «քաջ», իսկ մահից յետոյ դասվում էին աստուածների շարքը և պաշտուում էին իրրեւ նախնեաց պատկերներ: »

լի հանդիսացած քաջը — հակառակ էր ամենքին, որք թանք էին անում միապետ լինելու բոլոր հսկաների և դիցազների¹⁾ վերալ։ Հայկը ընդդիմացաւ նաև Բէլին, որ բազմակուտ, անմիտ և ուժեղ հսկաների մէջ ուզեցաւ բռնանալ այն ժամանակ, երբ մարդիկ տարածվում էին լայնատարր երկրի երեսը։ Որովհետեւ մոլեգնեալ մարդիկը՝ միսելով սուրբ իրենց ընկերի կողքը, աշխատում էին տիրել միմնաց վերալ²⁾։

«Այսպիսի գէպքում պատէհ ժամանակ էր Բէլի համար բռնանալ և տիրել բոլոր երկրի վերալ։ Հայկը չկամելով հնազանդել Բէլին, իւր Արմենակ որդու ծնելուց յետով՝ Բարելոնից չու արաւ, զնաց Արարատայ աշխարհը՝ որ հիւսիսալին կողմերն է, իւր որդիքներով, գուստրներով և որդոց որդիքներով — զօրաւոր մարդիկներով՝ թուով մինչեւ երեք հարիւր, նոյնայէս և ընդոծիններով և նոցա հետ միացած օտարներով՝ բոլոր իրենց կահ կարասին հետները առած»։

«Այստեղ հաստատեց նա իւր բնակութիւնը մի դաշտավայրի վերալ դժնուած լերան ստորոտում, ուր արդէն բնակում էին առաջուց ցրուած սակաւ թուով մարդիկ։ Հայկը սոցա հնազանդեցնում է իրեն»²⁾։ «Նա

¹⁾ «Դիցազն» նշանակում է «կէս — աստուած»։ Նա կազմուած է երկու բառից՝ «զիւց» — «րոյ» սկիզբն է «զիւ» կամ աւելի ձիշտ՝ «զևս» (deva · daeva) որ է «ոզի» և «ազն» — «որ է» ցեղ։ ուրեմն ոզիների կամ աստուածների ցեղից՝ կէս — աստուած։

²⁾ Հայկի Հայաստան գալուց և այդ երկրի նուածելուց առաջ բնակում էին այնտեղ բնիկներ, բայց ինչ ծագում ունեին դոքա՝ մինչեւ այսօր բացատրած չ'է։ չ'նայելով մեր

շինում է այնտեղ բնակութեան տուն և տալիս է ժառանգութիւն Արմենակի որդի Կաղմոսին. Իսկ ինքը՝ ընդոծինները առած, դիմում է դէպի հիւսիսի արեմուտքը և բնակում է մի բարձրաւանդակ դաշտի վերալ և այդ լեռնադաշտակը անուանում է Հարք¹⁾: Նա շինում է և մի զիւղ և կոչում է իւր անունով Հալկաշէն»:

Սորանից լետոյ վիպասանութիւնը դառնում է դէպի Բէլը. Նկարազրում է նորա արշաւանքը Հալաստանի վերալ, ուր հեռացաւ Հալկը, նորա պատերազմը Հալկի հետ և նորա մահը Հալոց նահապետի ձեռից:

«Հաստատելով, ասում է վիպասանը, իւր իշխանութիւնը ամենքի վերալ, տիտաննեան Բէլը ուղարկում է դէպի հիւսիս հաւատարիմ մարդիկների հետ իւր որդիքներից մէկին առաջարկելու Հալկին՝ Հնազանդիլ իրեն և ապրիլ խաղաղութեամբ։ «Դու բնակեցար, ասում է նա (Հալկին), սառնամանեաց ցրտութեան մէջ, ջերմացրու, մեղմացրու քո հպարտ բարքիդ սառնութիւնը և Հնազանդելով ինձ, Եկ, հանգիստ ապրիր իմ երկրի մէջ, ուր որ հաճոյ կը լինի քեզ»։

Իսկ Հալկը լետ դարձեց Բէլի պատգամաւորներին խիստ պատասխանով։ Դեսպանը վերադառնում է Բաքելոն։

«Այն ժամանակ տիտաննեան Բէլը՝ ժողովելով հետեւակ ամբոխից կազմուած իւր զօրքը, գալիս հասնում է

ժամանակի մի քանի Ասորեստանագէտների և Զենդագէտների համարձակ փորձերին։

¹⁾ «Հարք» — հոյր բառի յոգնական ձևն է. ուրեմն նշանակում է «հայրեր», Խորենացին այդ Խոսքից յետոյ իսկոյն

մինչև Հիւսիս՝ Արարատայ երկիրը, Կադմոսի բնակութեան տեղը։ Կադմոսը շտապում է գնալ Հայկի մօտ՝ ուղարկելով իրենից առաջ քաջ ընթացիկներ, «իմացիր, ով դիւցազուններից մեծդ, հրամալում է հաղորդել նորան, որ Իէլլը լաւէրժ (այն է անմահ¹) քաջերով և երկալնագէզ հսկալ մարդիկներով գալիս է քո վերալ։ Եմանալով նորա մերձենալլը իմ տանը²՝ ես փախալ և տագնապաւ գալիս եմ քեզ մօտ։ Ուրեմն շուտով մտածիր, ինչ որ անելու ես»։

«Իսկ Իէլլը իւր ամբոխի լանդուգն և անճռռնի զօրութեամբ՝ լեռնից վայր թափուող սաստիկ հեղեղի նըման շտապում էր Հայկի բնակութեան սահմանները, ապաւինելով զօրաւոր մարդոց ուժին և քաջութեանը։ Այստեղ ուշիմ, խոհեմ, քաջտգանգուր և խայտակն հրակալն³) շտապաւ հաւաքում է իւր որդոցը և թռռներին՝ քաջ, աղեղաւոր, բայց թուով շատ նուազ մարդիկ և (նոյա միացնելով) իւր ձեռի տակ եղած այլ մարդոց՝ հասնում է Աղի ծովակի⁴) ափերը, որ շատ մանր

առաջարկում է դորա մեկնութիւնը՝ ասելով. «այս տեղ բնակուողներից առաջացաւ Թորգոմի աղջը՝ այսինքն հայք»։

¹⁾ Տե՛ս . . . նախընթաց ծանօթութիւնը՝ «քաջ» բառի մասին։ — Ե. յս ածականը հաստատում է «քաջ» բառին տուածմեր մեկնութիւնը։

²⁾ «Տռռն» դրած է այստեղ փոխանակ տեղի բնակութեան։ ³⁾ Վիպասանը նկարագրում է Հայկին ոչ իրրե մի հասարակ մահկանացու, այլ իրրե մի «հսկայի» և մինչև անգամ—«քաջ»։ — Ինչպէս այս նկարագրութեան սկզբում նոյնպէս և այստեղ, աղջային երգիչը գործ է ածում այնպիսի լեզու, որ շատ հեռու է տարեգրութեան ոճից։

⁴⁾ Այն է Վանայ ծովը։

ձկներ ունի իւր մէջ։ Եւ կոչելով իւր զինուորներին նա ասում է. «Երբ որ մենք կ'ելնենք Բէլի ամբոխի գէմ, ջանանք մտնել այստեղ, ուր կըլինի Բէլը՝ քաջերովի շրջապատած. այնպէս որ կամ մեռնինք և մեր բոլոր ունեցածը Բէլի ձեռն ընկնի, կամ նորա վերալ ցոլց տալով մեր մատների լաջողութիւնը՝ ցրուենք նորա ամբոխը և լաղթութիւնը մենք ստանանք։» Եւ առաջ դիմելով՝ բարձր լեռների վերալ մի դաշտաձև տեղ են հասնում նոքա և մի գետի աջ եզրը՝ բարձրաւանդակ տեղում ամրանում են։» «Վեր բարձրացնելով իւրանց աչքերը՝ նոքա տեսան Բէլի անկարգ ամբոխի բազմութիւնը... իսկ ինքը Բէլը մեծ ամբոխով հանգարտ մնում էր գետի ձախ կողմը՝ բլրակի վերալ, ինչպէս դիտանոցում։ Հալկը ճանաչեց այն զինավառ խումբը, որոյ հետ գնում էր Բէլը՝ մի քանի ընտիր զինուորներով առաջ անցնելով իւր գլխաւոր զօրքից։ Բէլի և իւր զօրքի մէջ մեծ տարածութիւն կար։ Նա հագել էր երկաթի գլխանոց՝ փալլուն ծովերով. պղնձի տախտակները պաշտպանում էին նորա թիկունքը և կուրծքը, իսկ պահպանակները՝ ոտների բարձերը և ձեռները։ Մէջքը գօտի էր կատած. ձախ կողքից կախած էր երկասլքի սուրբ, աջ ձեռում ունէր ամուր նիզակը, ձախում—վահանը, և երկու կողմից քաջամարտիկներ։»

«Հալկը, տեսնելով տիտանեան Բէլին այնպէս զինաւորուած և նորա աջ ու ձախ կողքում՝ ընտիր քաջեր, կարգեց Արմենակին նորա երկու եղբայրներով աջ կողմից, կագմոսին իւր երկու որդիքներով՝ ձախ կողմից, որովհետեւ նոքա աջողակ էին կռվում աղեղով և սուսերով. իսկ ինքը անցաւ ամենից առաջ։ Մնացեալ զի-

նուորներին նա շաբեց իւր յետել և եռանկիւնի ձեռվ դա-
սաւորելով՝ սկսեց առաջ գնալ։ Ահագին դղրդիւն ըարձ-
րացաւ երկրի վերալ երկու կողմի հսկաների հանգիպե-
լուց և նոցա միմեանց հետ կռուելուց։ Նոքա իրանց
լարձակուելովը ահ և սարսափ էին ձգում միմեանց վե-
րալ։ Երկու կողմից ևս ոչ սակաւ յաղթանդամ մարդիկ
զետին անկան սրի բերանից և երկու կողմից յաղթու-
թիւնը մնում էր անվճիռ։ Այս անակնկալ դիսուածը
տեսնելով տիտանեան արքալն՝ տարակուսանքի մէջ ըն-
կած և զարհուրած սկսեց յետ նահանջելով դարձեալ
բարձրանալ այն բլուրի վերալ, որտեղից նա իջել էր,
մտագիր լինելով ամրանալ այն տեղ ամբոխի մէջ, մին-
չե որ օդնութիւն կը հասնի իրեն իւր բոլոր զօրքը,
և այնուհետեւ կրկին յարձակուիլ (Հայկի վերալ)։

«Աղեղնաւոր Հայկը նկատեց Բէյի ալս շարժումը.
Նա գնաց առաջ, մօտեցաւ արքալին և սինդ քաշելով իւր
լայնալիճ *) (աղեղը՝ զարկեց իւր երեքթուեան (նետը)
նորա կրծքի տախտակին. սլաքը թափանցելով թիկուն-
քից՝ անկաւ գետին։ Գոռող տիտանը ալս հարուածից
զետին թաւալուելով՝ փչում է իւր հոգին։ Իսկ զօրքը,

*) «Լայնալիճ» — այսինքն՝ լճի պէս լայն։ Այս ածականը
որոշում է հսկայ Հայկի աղեղի ահագին մեծութիւնը։ Այլ
տեղում վիպասանը անուանում է Հայկին «հաստաղեղն» (Գր.
Ա., Գլ. 9.), որ երեկի, թէ միայն կարող էր իւր ձեռն առնել,
ինչպէս «կորովաձիգ»։ ակամայ մարդ մտարերում է Աղիւսի
աղեղը, — Բոլոր այս հատուածը, որպէս և միւս յետագայ տո-
ղերը, ներշնչուած են վիպասանական ոգով և ոչինչ նմանու-
թիւն չունին տարեգրութեան ոճին։

տեսնելով ալսալիսի մի ահազին քաջութեան գործ, երեսները գարձրած՝ փախչում են *):

Վիպասանը, Հոկաների կռուի այս հիանալի պատկերը նկարագրելուց յետոյ, պատմում է, թէ Բնչպէս Հայոց նահապետը հիմն է գնում լաղթութեան տեղը Հայոց թագաւորութեան, շինելով գաստակերտ և կոչե-

*) Եսկախ աղջային վեպերից՝ գուցէ և նոցա աղգեցութեամբ, յետ ժամանակի կոչուեցաւ և պահուեցաւ մինչև այժմ Աանայ ժողովրդի բերանում ։ Նէմրութ թագաւորի զրայցը՝ —որյ վերայ հրաւիրում ենք ընթերցողի ուշագրութիւնը իրեւ մի աւանդութեան, որ մատղբութեան արժանի է, Վանայ հայերի մէջ ։ Նէմրութ¹⁾ լերան և Ուղարու քարերի²⁾ մասին կայ այսպիսի մի աւանդութիւն։

Նէմրութ հզօր թագաւորը՝ բռնութեամբ տիրելով հարաւային երկրների շատ գաւառներին, գալիս է Հայաստան և կամենում է, որ այդ երկրի ժողովուրդը պաշտէ իրան իրեւ Աստուած։ Այս նպատակաւ նա սկսում է շինել մի դաստակերտ ահեղ բարձութեամբ լերան գագաթի վերայ, ուր արդէն պատրաստի կար շինութեան նիւթ և ուր ուղտերի

1) Նէմրութ լեառը գտնվում է Վանայ լճի հիւսիս արևմուտքը, ուր Հայերը ։ Վանայ ծով են կոչում։ Նէմրութի ստորոտի հարաւային կողմը՝ գէպի Վանայ ծովի նաւահանգիստ Դատվանը, մի ձորի երկայնութեամբ շարուած են ։ Ուղտու քարեր, կոչուած ժայռերը՝ թուով 60 ից աւելի, որոնցից իւրաքանչիւրը փղից երկու անգամ մեծ է, նորա ձրգվում են մէկմէկու յետերից՝ կարաւանի նման։ Ժողովրդի մէջ այս քարերը հաշակուած են ։ Նէմրութ թագաւորի ուղտերի երամակ անունով, որը գարձան անէՃրից³⁾,

2) Աւղտի քարերը՝ գտնվում են Վանայ լճից հարաւ Դատվանի և Նէմրութի մէջ տեղը։

լով նորան Հայք^{**}): Այնուհետև պատերազմի աւարից նա բաժին է հանում Կադմոսին և ընդոծիններին, իսկ ինքը վերադառնում է և երկար տարիներ ապրելով, մեռնում է:

Երամակներով առաջ էին կրում Պատվանի ափից: Եւ աչա երբ աչազին շինութեան գործը մօտ էր աւարտման՝ 'ի հիացումն բոլոր տեսնողների՝ Նէմրութը: Կամենալով տպաւորել բոլորեցունց մտքի մէջ, թէ իսկ ինքն է աստուածը և թէ չ'կայ բացի իրանից աւելի զօրեղ աստուած: Բարձանում է իւր կառուցած շենքի տանիքի վերայ և յարում է իւր աղեղը դեպի երկինք՝ որպէս զի Աստծուն սպանէ և ինքը նորա տեղը բռնէ: Բայց ճշմարիտ Աստուած՝ աեսնելով նորա ամրարտաւանութիւնը, հանում է (Վանայ) ծովից մի մեծ ձուկն և բռնում է Նէմրութի նէտի դէմ: Նէմրութը արձակեց նետը և զիսպաւ ձկան: արիւն կաթեց վերկից վայր: Նա կարծեց: որ Աստուած սպանուած է և բոլորին հաւատացրեց: որ արդարեւ այդպէս է: Մինչդեռ նա և այս անցքին բոլոր ներկայ անձինք ուրախանում էին պատահած դեպքին, զրգուեցաւ աստուածային բարկութիւնը: զարկեց կայծակը և ուղտերի երամակը քար գարձրեց այն իսկ տեղում, ուր նորա կանգնած էին: իսկ ինքը Նէմրութը իւր կառուցած շենքի հետ վայր զղորուեցաւ իւր ոտքերի տակ բացուած անդունզը, որտեղից բղիւց Յօրդառաւատ Ֆուր¹⁾, ծածկելով բոլոր տարածութիւնը: — Այսպէս անհետացաւ Նէմրութի յիշատակը:

(Տեղագրութիւնք 'ի Փոքր և 'ի Մեծ Հայուն. Ներսիսի Սարգսեան, Աւենետիկ, 1864թ.)

¹⁾ Յօրդառաւատ Հուր՝ — այն լճերն են, որը մինչև այսօր կան այնտեղ:

^{**)} «Հայք» նշանակում է «Հայեր» և իրեւ յոդեակի ձեւ, իւր վերջումունի և մինչդեռ «Հայեր» բառի վերջը է ուշ:

Սորանից լետու ինչ որ Խորենացին պատմում է Հայկի որդու Արմենակի և Նորա սերունդների մասին մինչև Արամը՝ Հայկի վեցերորդ լաջորդը, ինչպէս Վեպերից չքաղած նիւթ, այլ ժողովրդական աւանդութիւնից, մենք մի կողմ ենք թողում և գիմում ենք վիպասանին, որ այսպէս է նկարագրում Արամին և նորա արարքը.

(Արամը¹⁾) լինելով աշխատասէր և հայրենասէր անձն, լաւ էր համարում մեռանել հայրենեաց համար, քան թէ տեսնել, ինչպէս օտարածինները կոխում են հայրենի սահմանները և ալլազգի մարդիկը տիրում են իւր արենակից ազգայիններին...: Նեղուելով իւր շրջակալ ազգերից՝ նա ժողովում է բազմաթիւ ընտանի քաջ մարդիկ՝ ազեղնաւորներ, աջողակ նիզակաւորներ, երիտասարդ, աջողաձեռն, կորովի և պատերազմասէր անձինք թուով մինչև լիսուն հազար: Նա պատահում է Հայտաստանի սահմաններում Մեղացի երիտասարդներին²⁾, որոց առաջնորդում էր Նիւքար անունով ոմն՝ Մագէս³⁾

¹⁾ Կարգալով Արամի և Նորա գործերի այս նկարագրութիւնը մարդ ակամայ հարցնում է. մի՛մէ Նինուէի զիւանի քաղզէական Գիրքը կարող էր այսպիսի հիացմունքով խօսել հայ նահապետի քաջագործութիւնների վերայ:

²⁾ «Մեղացի երիտասարդք» — ինչպէս կ' տեսնենք ստորև, Նամիրամի և Արայի պատերազմների նկարագրելու ժամանակ վիպասանը նոյնպէս գործ է ածում «մանկունք» բառը, պատմելով Նսորեստանի թագուհու զինուորների մասին: Նոյն իսկ բառը գործ է ածում և Դիոդորոս Սիկիլիացին, խօսելով Ծամիրամի զինուորների վերայ՝ ըստ Կտեսիոսի:

³⁾ «Մագէս»: այս վերազիրը երկի թէ նշանակում է

անուանեալ՝ Հայրտ և պատերազմանէր մարդը։ Առ նուաճելով Հայստանը, ծառայեցրեց իրան երկու տարի, սմբակակոխ անելով... մեր սահմանները։ Առաջե բայ յանկարծակի լարձակուեցաւ Արամը և արեգակի ծագումից առաջ¹⁾ սատակեց նորա ամբոխի բաղմութիւնը և՝ բռնելով նոյն իսկ Մադէս անուանեալ Նիւքարին, տարրաւ Արմաւիր²⁾։

Այստեղ նա հրամալում է միսել նորա ճակատին երկաթէ ցից և կախել պարսպի աշտարակի ծալրից՝ ի տեսիլ անցաւորների և ալնտեղ գնացող մարդոց։ Նորա աշխարհի վերայ մինչև Զարսապ³⁾ կոչուած լեառը Արամը ծառալութեան հարկ դրեց մինչև Նինոսի Ասորեստանի և Նինուէի վերայ թագաւորելը։

Ալնուհետեւ ԱՀպերի մէջ գովարանվում էին Արամի քաջագործութիւնները⁴⁾ Ասորեստանի սահմաններում կատարուած, նորա լաղթելը Բարշամին, որ հսկաների սերունդից էր և աւելում էր Հայոց աշխարհը, և նորա մահը Հայոց գիւցազնի ձեռից. վերջապէս՝ Արամի կռիւը տիտանների հետ, որոնցից Պալապիս Քաղիալին նա սաստիկ հարուած տալով՝ փախստական է անում, խա-

«մեղացի»։ որովհետեւ Մեղացիք «Մադաշէին անուանումիրենց»

¹⁾ «Արեգակի ծագումից առաջ։ այսպիսի ճիշտ մանրամասնութիւնը կարող էր լինել միոյն ԱՀպերի և երրէք տարեգրութեան մէջ։

²⁾ «Արմաւիր»—Հայոց հին մայրաքաղաքը Քրիստոսից աւելի քան 2000 տարի առաջ շինուած։ գտնվում էր Երասխի ափում։ Արմաւրում կար սրբազն անտառ։

* Զարապ լեառն է Մարաստանում։

զաղութիւն և հանգստութիւն տարածելով երկրի մէջ:

Արամի որդի՝ Արայ գեղեցիկը մեծ տեղ էր բռնում ազգալին Վէպերի մէջ, որտեղ Նամիրամը հանդէս է գալիս ոչ այնպիսի յատկութիւններով, ինչպէս մենք սովոր ենք տեսնել նորան Դիոդորոսի պատմութեան մէջ՝ ըստ Կտեսիոսի: Վիպասանը, ցոյց տալով Արայի հարկատու լինելը նինոսին և վերջինիս Կրիտէ կղզէն փախչելը, սկսում է նկարագրել Նամիրամի կրքոտ սէրը գէսի գեղեցիկ երիտասարդը: Էոլոր նորա խորամանկութիւնները, որ նա գործ էր գնում համոզելու Արային գէպի փոխադարձ սէրը, փշրվում են պատանի իշխանի զգաստութեան գէմ, որ չէ խարվում նորա հրապուրանքներով: Այն ժամանակ վշտացած թագուհին մեծ գօրքով գալիս է Արայի գէմ այն նպատակով, որ գերի բռնէ և ստիպէ կատարել տալ իւր ցանկութեան կամքը: Սակայն պատեազմի հետեւանքը անլաջող եղաւ հայերի համար. Հայոց զօրքերը լուղթուած են և Արայն սպանուած: Անմիտիթար թագուհին իւր բոլոր ուշը և հոգսը գտրձնում է նուաճած երկրի վերալ, սկսում է շինել նորա մէջ քաղաք. որոյ նկարագրութեան և շէնքի բոլոր հրաշալիքների համար վիպասանը դժուարանում է խօսք գտնել՝ ինչպէս կը տեսնենք ներքեւում:

Նամիրամի որդիքը՝ չափահաս լինելով, սկսեցին լիշեցնել իրանց մօրը նորա անկանոն բարքուվարքի մասին և պահանջել, որ իւր իշխանութիւնը աւանդէ իւր որդոցը: Այս պահանջմունքից զայրացած՝ նա հրամալում է սոստակել բոլորին, բացի նինուասից: Նամիրամը սիրեց նորանուած երկիրը, ուր հաճութեամբ անցուցանում էր ամառնային եղանակը: Ամեն անզամ, երբ նա

գնում էր Հայաստան, Ասորեստանի և Նինուէի կոռավարութիւնը լանձնում էր Մարաց նահապետ՝ Զրադաշտին։ Ալսպիսի մի ճանապարհորդութեան ժամանակ Զրադաշտը ուզեց ձեռք բերել թագաւորական իշխանութիւնը։ Այս պատճառսկ նամիրամբ պատերազմ սկսեց նորա դէմ. բայց բաղմուելով՝ փախաւ Հայաստանու Վիպասանութեան մէջ նկարագրվում էր, ինչպէս նա հետեւակ փախչում էր, ինչպէս ճանապարհին տանջվում ծարաւից, ինչպէս ջուր էր սրոնում, ինչպէս նա զովացրեց իւր ծարաւը և ինչպէս՝ նկատելով իրան հետեւող զինուօրների մօտենալը, ծովը ձգեց իւր լուռութ—ուլունքը *): Ալստեղ ծովի ափում կատարուեցաւ զուցէ նորա-

*) Ըամիրամի ուլունքների աւանդութիւնը, որք չին ժամանակներից նա զործ էր դնումյուռութքի՝ թալիսմանի տեղ, պահպանուել է մինչև մեր որերը, Այդ աւանդութիւնը, ինչպէս ընթերցողը կ'առեսնի, ունի այնպիսի մանրամասնութիւններ, որք նոյնպէս ապացոյց են նորա խորին հնութեան և թերեւ Վիպասանների երգի արձագանքը լինին։ Այստեղը, ուր պահչուել է այդ աւանդութիւնը, է Ըամիրամի գործունէութեան հին ասպարեզը՝ Վանը և Վանայ ծովի շրջակալիքը, Այստեղ մենք միոցնումենք Վանայ հայերի բերանումը շրջող այս աւանդութիւնը դարձեալ Հայոց հնագոյն ազգային վիպասանութեան մի հատուածի հետ, որովհետեւ այդ աւանդութիւնը մենք ընդունում ենք իրեւ լրացումն կամ բացատրութիւն հոյ պատմազրի հակիրճ և համառօտ նկարագրութեան վելունք Ըամիրամայ ՚ի ծով։ Ահա այդ աւանդութիւնը,

«Մի անգամ Ըամիրամ թագուհին՝ զբօսնելով Վասպուրական երկրի գաշտերում, նկատեց մի տեղ մանուկների մի խումբ, Մատենալով նոցա՞նա տեսաւ, որ մանուկները հետաքրքրութեամբ զննում են ուլուններ, որ նոր զաել էին»

Հրաշալի փոխակերպութիւնը՝ ի քար, որոյ մասին լիշտում է Խորենացին՝ քաղելով ալս մանրամասնութիւնը, երեք թէ, Վէպերից։ Որովհետեւ այլապէս կարելի չ'է հասկանալ նորա խորհրդաւոր խօսքերը. — «և Նամիրամ քար առաջին քան զնիորէ», բայց միայն ենթադրելով, որ հայկական աւանդութեան մէջ լիշվում էր Ասորեստանի թագուհու քար դառնալը։ Բայց ինչո՞ւ «Նիորէից առաջ»։ Բնչ էր ուզում ասել Խորենացին, համեմատելով վավաշուտ Նամիրամին գոռող նիորէի՝ — Ամփիոնի կնոջ, Տանտալի դստեր, Ատլանտի թոռի, Զեսի ազգակցի հետ։

Այսպէս՝ հայկական աւանդութիւնը ունի իւր առանձին ինքնագոյ ձևը՝ հակառակ Կտիոսի պատմածին, ուր Նամիրամը յանկարծակի անհետանում է աշխարհից, իբրև թէ լափշտակուած, տարուած լինի աստուածների

գետնի վերայ։ Ըամիրամը իսկոյն ճանաչելով ուլունների պատուականութիւնը՝ առնում է մանուկների ձեռից և պարզեներ տալով արձակում է նոցա։ Այս ուլուններով նա սկսեց մոգել և կախարդել՝ գործել ամենայն տեսակ չարութիւն։ Հետագա անդեմով իւր ապականուած սրտի թելագրութեանը. նա կախարդում էր, որին որ կամէր՝ իւր տռփանքը յագեցնելու համար և եթէ հարկ լինէր մէկին կորցնել՝ նա ոյդ ևս կատարում էր առանց մի դժուարութեան։ Քոլորեքեան այս տեսնում էին, բայց ոչ ոք չէր համարձակվում ձիկ անգամ հանել Միայն մի ծերունի, որ ազատ ելումուտ էր անում թագուհու տունը, զիտէր նորա խորհուրդները. նա Ըամիրամի խորհրդականն էր, Վաղուց սա զրել էր իւր մաքին ազատել երկիրը Ըամիրամի ձեռից և նորա ուլունների զօրութիւնից։ Մի օր, երբ նա թագուհու հետ Արտամէտ (Ամեայ ծովի հարաւարեմտեան կողմը) քաղաքումն էր, պատեհ ժամ դժնելով՝ խլեց նորա ձեռից ուլունները և փախաւ։ Ըամիրա-

գասը *): Համառօտ կերպով նկարագրելով այս աւանդութիւնը ըստ Խորենացու, մենք կըկին կը շարունակենք մեր թողած պատմական անցքերի թելը ազգային վէպերին համաձայն։ Ալդ վիպասանութեան մէջ Արա գեղեցիկ և Նամիրամի կեանքից առած անցքերը նկարագրուած են, ինչպէս մենք ասացինք, մանրամասնօրէն, Մենք կը հազորդենք նոցա ալստեղ մեր ընդունած ծըրագրով, ինչպէս ալդ արինք Հայկի և Արայի վերաբերմամբ։

Արայն՝ իւր հօր Արամի նման, Հարկատու էր Նինսոսին։ Ուստի նորա գեղեցկութեան համբաւը շուտով հասաւ Շամիրամին։ «Վավաշ և բորբորիտ թագուհին, ասում է Ախատասանը, միջոց էր որոնում լցուցանել իւր ցանկութիւնը, բայց Նինսոսի կենդանութեան ժամանակ չ'էր համարձակվում յայտնապէս զործել։ Նինսոսի Կրիտէ կղզին փախչելուց լետով՝ նա սկսում է համարձակ

մը՝ զայրացած և կատաղի բարկութեամբ լցուած, վաղեցնորա հետքից, բայց չ'կարողացաւ նորան հասնել։ Այն ժամանակ նա արձակում է իւր երկար ու թաւ մաղերը, պարսատիկ է շինում այդ մաղերից, առնում է մի աշագին ապառաժ, գնում է մաղերի մէջ և ձգում գէպի ծերունին։ Սաստիկ ոյժից պոկ եկան նորա մաղերը ապառաժի հետ միասին և ինքը գլորուելով անկաւ մի փոսի մէջ՝ Արտամետ քաղաքի մօտ, որ մինչև այսօր ևս ցոյց են տալիս։ Իսկ ծերունին անդադար փախչում էր, մինչև որ հասաւ Դատվանի ծովեղը և ձգեց ուլունները (Անայ) ծովը։ — Այսպէս աղատուեցաւ բոլոր երկիրը Շամիրամի մոգական շարութիւնից։
(Տեղագրութիւնը ներսիսի Սարգսեան, 1864 թ. Վեհենտիկ)։

*) Տես Պիոդորոս Սիկիլիացու պատմ. Գիրք II, 20.

պատուել իւր ախտը. դեսպաններ է ուղարկում Արայ
Գեղեցկի մօտ առատ պարգևներով: Նատ խոսառւմներ
տալով՝ նա աղաջում է նորո՞ն գալ Կինուէ կամ ամուս-
նանալ իրան հետ և թագաւորել ամենքին, որոց վերալ
տիրում էր Կինոսը, կամ թէ՝ կատարելով իրան ցան-
կութեան կամքը՝ խաղաղութեամբ և մեծագին ընծանե-
րով դառնալ իւր տեղը: Դեսպանների շատ անդամ ՚ի
զուր գնալուց և Արայի (թագուհու առաջարկութեանը)՝
հաւանութիւն չտալուց յետոյ, Նամիրամը սաստիկ
զայրանալով՝ շտապում է բազմաթիւ զօրքով մտնել
Հայստան և յարձակուիլ Արայի վերալ, բայց ոչ այն-
չափ սպաննելու Արային, որչափ ողջ բռնել տալու նպա-
տակով,—որպէս զի ստիպէ կատարել տալ իւր ցանկու-
թեան կամքը:—Իւր վավաշոտութիւնից մոլեգնած՝ նա,
ինչպէս ասած է Երզի մէջ, վառվում էր ցանկութեամբ՝
որպէս թէ նոյն իսկ Արային էր տեսնում իւր ա-
ռաջեւ: Նամիրամը շտապաւ եկաւ Արայի գաշտը: Կոռից
առաջ նա պատուէր է տալիս իւր զօրապետներին ջա-
նալ ողջ բռնել Արային: Բայց, երբոր սկսաւ կոիւր,
յաղթուեցաւ Արայի զօրքը և ինքը մեռաւ Նամիրամի
«մանուկներից»: Յաղթութիւնից յետոյ թագուհին դիա-
կապուտներ է ուղարկում կռուի տեղը, որոնելու ան-
կած դիակների մէջ իւր ըղձալին և տարփածուն: Արա-
յին գտնում են մեռած քաջանարտիկների մէջ: Թագու-
հին հրամալում է դնել նորան իւր ապարանքի վերնա
տանը»:

«Եւ երբ Հայոց զօրքը կրկին անդամ պատերազմի
գոգուուեցաւ Նամիրամի գէմ՝ վրէժինդիր լինելու Արայի
մահուանը, Նամիրամը ասաց. «Հրամալեցի իմ աստուած-

ներին լիզել նորա վէրքերը և նա կ'կենդանանալ»։ Արգարեւ ինքը ցնորուած տո փական ցանկութիւնից, լոյսունէր կենդանացնել նորան իւր վհկութեան արուեստի գիւթութիւններով. բայց երբոր նեխնցաւ գիտկը, հրամացաց ձգել մի խոր փոսի մէջ և ծածկել, և իւր հոմանիներից մէկի մասին՝ ծածուկ զարդարելով նորան շքեղ հանգերձներով, տարածեց ալսպիսի լուր. «թէ աստուածները լիզելով Արային՝ կենդանացրին նորան և լցրին մեր ցանկութեան փափազը Աւստի այսուհետեւ ևս աւելի պաշտուելու արժանի են նոքա մեզանից՝ իրքն ցանկութիւնը լցնող և կամքը կատարող»։ Մի նոր պատկեր ևս կանգնում է նա դեերի անունով և մեծապէս պատվում է զօհերով՝ կամելով ցոյց տալ ամենքին, թէ այն աստուածների զօրութիւնն էր, որ կենդանութիւն տուեց Արային։ —Եւ ալսպէս Շամիրամը, հռչակելով այս համբաւը Հայոց երկրում և բոլորին հաւատացնելով, գագարեցնում է պատերազմը։

Խաղաղացնելով գոգոռուած Հալերի մտքերը և մի փոքր հանգստանալով Արարատեան դաշտի մէջ՝ Շամիրամը զնում է հարաւ զբօնուել հովիտների և ծաղկաւշտ դաշտերի մէջ. ժամանակը ամառնալին էր։ Տեսնելով երկիրը գեղեցիկ, օգը մաքուր, լստակ աղբիւրներ և կարկաչահոս գետեր, նա ասում է. «ալսպիսի երկրում, ուր օգը այնպէս բարեխտան է, ջրերը այնպէս մաքուր, վալել է մեզ քսղաք և արքունիք շինել և տարուալ չորրորդ մասը՝ ամառնալին եղանակը, անցուցանել Հայատանում ամենալին բարեվայելչութեամբ. իսկ մնացեալ երեք զով եղանակները՝ նինուէ»։

«Եւ շատ տեղերից անցնելով և հասնելով Աղի

ծովակի արևմտեան կողմը՝ Շամիրամը տեսնում է ծովակի ափին մի լեռնազաշտակ, որոյ երկայնութիւնը դէպի արևելք էր և հիւսիսից ունէր զառիվալը, իսկ հարաւից քարարլուր, որ սեպ և ուզգորդ բարձրանում էր դէպի երկինք: Բլրի հարաւալին կողմը կար մի հովիտ գաշտաձև՝ դէպի արևմտեան կողմը ձգուած, իսկ հիւսիս—արևմուտքից՝ սրաձև մինչև ծովակի ափը: Բլրի և հովտի մէջ տեղից հոսում էին բարեհամ ջրեր, որք իջնելով լեռներից և ծործորներից և անցնելով հովիտքից, ոմանք նաև լեռների ստորոտից բխելով՝ զալիս միանում էին և թափվում ինչպէս պերճացեալ գետեր: Սակաւ չէին այս հովտի մէջ և շէնքեր՝ գետի աջ և ձախ կողմից: Բլրի արևելեան կողմը կար մի փոքրագոյն լեառն»:

«Այս տեղի վերայ հիացած՝ այրասիրտ և վակաշոս Շամիրամը հրաման տուեց անյապաղ բերել տալ դէպի իւր ընտրած տեղը Ասորեստանից և այլ Հպատակ երկիրներից տասն և երկու հազար անարուեստ մշակներ և վեց հազար հոգի իւր ընտիր արուեստաւորներից՝ քարի, փալտի, պղնձի և երկաթի գործաւորներ, որք կատարելապէս գիտէին իրանց արուեստը: Թագուհու հրամանը ճշտութեամբ կատարուեցաւ, իսկոյն տեղ հասան մշակների խառնիճաղանջ բազմութիւնը և բազմարուեստ ու հանճարեղ ճարտարապետները»:

«Նախ Շամիրամը հրամայում է շինել գետի լայն և բարձր ամբարտակը մեծամեծ ապառաժներից՝ միացնելով նոցա կրով և աւազով... Եւ եթէ մէկը փորձէր պարսատակի համար մի քար հանել այդ շինուածից,՝ ի զուր կ'լինէր նորա ջանքը. իսկ քարերի հեղուածը ալնպէս ողորկ էր, որ կարծես թէ՝ հալած ճարպ թա-

փուած լինի։ Այսպէս շինուեցաւ գետի ամբարտակը մինչև այն տեղը, ուր որոշուած էր քաղաք շինելու։ և Այստեղ հրամայեց Նամիրամը գործաւորներին դաս դաս բաժանել և իւրաքանչիւր դասի վերայ ընտիր արուեստաւորներից վարդապետներ (վարպետներ) կարգել։ Այսպէս՝ սաստիկ աշխատեցնելով նոցա, նա մի քանի տարուց լետով աւարտեց հրաշալի (քաղաքի) շինութիւնը՝ պատելով նորան ամուր պարիսպներով և պղնձակերպ գռներով։ Նոյնպէս շինեց քաղաքի մէջ բազմաթիւ հոյակապ կրկնալտրկ և եռալարկ ավարանքներ ալլեալլ տեսակ և պէս պէս գոյն քարերից։ Քաղաքի թաղերը որոշեց զեղեցիկ զոյներով և նոցա բաժանեց ընդարձակ փողացներով։ Նաև չքնաղ և զարմանալի լուալիք (բաղանքիք) շինեց քաղաքի գլխաւոր տեղերը։ Նա բաժանեց գետի ջրի մի մասը քաղաքի մէջ, ուր որ կարուութիւն կար ջրի՝ բուրաստաններ ու ծաղկոցները ջրելու համար. իսկ նորա մնացեալ մասը թողեց ծովակի երկու կողմը՝ աջ և ձախ՝ քաղաքի և նորա շրջակայ տեղերի ոռոգման համար։ Քաղաքի արևելեան, հիւսիսային և հարաւալին կողմերը նա զարդարեց զաստակերտներով և սաղարթախիտ ծառերով՝ զանազան պտղի և տերեւի։ Տնկեց նա և շատ պտղատու ու գիներեր խաղողի որթեր։ Եւ ամեն բանով հօյակապ և հոչակաւոր յօրինելով քաղաքը՝ գաղթականների բազմութիւն է ըերում և բնակեցնում նորա մէջ...»

«Բլրի գագաթը պարսպելով՝ Նամիրամը շինում է արքայանիստ ծածուկ ընակարաններ՝ դժուարամուտ և դժոխելաննելի ճանապարհներով....»

«Քարաբլրի ալն կողմը, որ հայում է գէալի արևելք...»

կտրած, փորած են պէս պէս ապարանքներ, ննջարանի սենեակներ, գանձատներ, երկար փոսեր,—բայց թէ որպիսի հնարներով՝ լալտնի չէ: Նաև քարերի վերալ, որպիս թէ մոժի վերալ, իբրև գըշով քանդակել տուեց արձանագրութիւններ...: Հայոց երկրի շատ կողմերում նա հաստատեց արձաններ և նոյն օրինակ զրերով նոցա վերալ արձանագրութիւններ փորել տուեց *)...::

Մեր պատմիչը նկարագրելով Շամիրամի և Արայ Գեղեցիկի լարաբերութիւնները, Հայաստանի նուաճումը, Հայաստանում Շամիրամի ձեռով սկսած և աւարտած մեծամեծ շինութիւնները,—շարունակում է իւր պատմութիւնը. բայց առաջին 7 գլուխներում՝ 17-րորդից մինչև 23-րորդը՝ պատմական անձինքը և անցքերը սաստիկ շփոթուած են, պատճառը որ Խորենացին՝ բացի իւր կեղծ—Մար—Աբասից, դիմում է իւր ձեռի տակ եղած տեղական բազմաթիւ ազբիւրներին՝ դոցա թուում և՝ Աէպերին: Դժուար է այս քառօի մէջ մի որոշ ելք գտնել, թէև անհնար չէ, բայց ոչ ներկալ աշխատութեան մէջ, որովհետեւ այդ կ'հեռացնէր մեզ մեր նպատակից: Ուստի՝ բաւականանալով այս ընդհանուր նկատողութեամբ, անցնինք Առաջին Գրքի 24-րորդ գլխին,

*) Շամիրամի ձեռքով Հայաստանում կառուցած բոլոր շինութիւնները, որոնց նկարագրում է վիպասանը: մէծ նմանութիւն ունին Կառսիոսի պատմածի հետ: որը մէջ է բերում Դիոգորոսը: Հաւանական է, որ Խիդացի պատմիչը քաղել է այս մանրամասն տեղեկութիւնները պարսից զիւաններից՝ իւր պարսից գուռն եղած ժամանակ: —Տե՛ս Դիոգորոսի Գր. II, 6—16:

ուր Խորենացին դարձեալ դիմում է մի միայն ազգալին Աէպերին և այս աղքիւրներից քաղելով՝ զրում է Մեծն Տիգրանի պատմութիւնը։ Պատմիչը, լիշելով, որ Տիգրանը ընդարձակեց Հայաստանը մինչև նախկին սահմանները՝ լանձնում է պատմութեան թելը վիպասանին, որ ալսովէս է նկարագրում Տիգրանին և նորա զործերը թէ Հայաստանում կատարուած Իւ թէ նորա սահմաններից գուրու։

«Քաջերի գլուխն անցնելով՝ քաջութիւն ցոլց տուեց Տիգրանը և մեր ազգը բարձրացրեց։ Մեզ, որ այլոց լծի տակ էինք, լծաղիր և Հարկապահանջ կացոյց շատերի վերայ *), նա բազմացրեց ոսկու և արծաթի զանձերը, պատուական քարերը, որպէս և արանց ու կանանց համար պէսովէս զոյներով և անզուածներով զգեստները, որով տղեղները երեսում էին զեղեցիկ և զեղեցիկները՝ գիւցագներ։ Տիգրանի օրով հետեւակ զօրքերը հեծելազօր դարձան, պարսաւորները հմուտ աղեղնաւորներ։ շեշտաւորները զինուորուեցան սրով և նիզակով, մերկ զինուորները ծածկուեցան վահաններով և երկաթի պահպանակներով, այնպէս որ, երբ մի տեղ ժողովուէին՝ միայն նոցա տեսիլը և պահպանակների ու զէնքերի շաղիւնը բաւական էր արտահածելու

*). Այստեղ Խորենացին արդէն բոլորովին մօռ անում է, որ Մար—Արասին է վերագրում իւր հայրենեաց պատմութիւնը և ամփոփուն կերպով մէջ բերելով վիպասանի խօսքերը, ինքն իրան մատնում է։ Որովհետեւ Քաղզէական Գիրքը ամենենին չ'էր կարող խօսել հայ թագաւորի մասին. թէ Տիգրանը բարձրացրեց մեր ազգը և մեզ, որ այլոց լծի տակ էինք, լծաղիր և Հարկապահանջ կացոյց շատերի վերայ...»

թշնամիներին։ Խաղաղութեան և շինութեան բերող Տիգրանը իւղով և մեղրով էր պարարում ամենայն հասակի մարդոց։

«Այս և սոցա նման շատ ուրիշ բարիք գործեց մեր աշխարհի համար խարտեաշ և գանգրահեր Երուանդեան Տիգրանը՝ երեսօք զունեան և մեղուակն, անձնեալ և թիկնաւէտ, առոյգաբարձ և զեղեցկոտ, ուտել խմելու մէջ պարկեշտ՝ և խրախճանութեան մէջ օրինաւոր։ Մ եր հին երգիչն երը, «թէ նա զսպող էր իւր մարմնի ցանկութիւնը, պերճախոս էր և մեծիմաստ՝ մարդկութեան ամեն մի պիտանի գործում... Ա.ինելով արդարադատ և հաւասարասէր՝ նա իւր մտքի լծակով կշռում էր իւրաքանչիւր մարդոց վարմունքը, ոչ մեծերին էր նախանձում և ոչ ստորիններին արհամարհում, այլ իւր խնամքի վերարկուն տարածում էր ամենքի վերայ հաւասարապէս¹⁾։»

Այնուհետև Վ.Էպերի մէջ նկարագրվում էր Տիգրանի բարեկամութիւնը Կիւրոսի և Աժդահակի հետ։ Աժդահակը երկիւղ էր կրում մի գուցէ իւր ալդ երկու սահմանակից թագաւորները գաշինք կապեն միմեանց հետ իւր գէմ։ Այս երկիւղը աւելի ևս սաստկացաւ մի մարդարէտական երազից։ Վ.իսլասանը ասում է, «որ այս երազի լիշտատակը միայն փախցնում էր Աժդահակի քունը»։ Նատ անդամ նա դիմում էր իւր խորհրդակիցներին՝ հարցնելով «որպիսի հնարներով կարող ենք մենք քանդել այն կապը,

¹⁾ Գր. Ա. Գլ. 24. — Նախընթաց ծանօթութեան նկատողութիւնը կարող է վերաբերուել և՛ այս հատուածիս։

որ միացնում է պարսկին (Կիւրոսին) բազմաթիւրաւոր հայի (Տիգրանի) հետ։ — Մինչդեռ ալսալիսի մտքերը խռովնցնում էին նորան, մի մարգարեական երազի մէջ լայտնվում է նորա ասլադալ վիճակը, որու մասին վիպասանը ալսալէս է պատմում²⁾։

«Այս օրերը ոչ սակաւ վտանգ էր սպառնում Մարտ Աժդահակին Կիւրոսի և Տիգրանի բարեկամութիւնից. ուստի սաստիկ երերման մէջ էր Աժդահակը։ Մի գիշեր մտքերի սաստիկ խռովութիւնից՝ մինչ նա քնած էր, երազի մէջ տեսաւ ինչ որ չ'էր տեսել արթուն ժամանակ աչքերով և չ'էր լսել ականջներով։ Աժդահակը վեր է թռչում քնից և չ'սպասելով սովորութեան համաձայն խորհրդականութեան ժամին, գիշերով կանչում է իւր խորհրդակիցներին։ Տրտում երեսով զետին է նալում նա՛ հառաչելով սրտի խորքից։ Խորհրդակիցները հարցնում են այս տրտմութեան պատճառը. նա երկար ժամանակ լուռ է։ Վերջապէս հեծութեամբ լայտնում է իւր սրտի ծածուկ խորհուրդները և կասկածները, որոց հետ և սոսկալի երազի մանրամասնութիւնները։

«Այսօր երազիս մէջ, ասում է նա, սիրելիք, ես մի անծանօթ երկրում էի՝ մի շատ բարձր լերան մօտ, որու գագաթը թւում էր սաստիկ սառնամանիքով պատաժ։ Ասում էին՝ թէ Հայկազանց երկիրն է արդ։ Մինչդեռ ես ապշած նալում էի լեռնիվեր, մի կին ծիրանազգեստ երկնալին քօղով երևեցաւ այն լերան գագաթին՝ աչեղ, բարձրահասակ, կարմրալու և ծննդական ցաւով բռնսւած։ Երկար գիտելով այս տեսիլը՝ ես տե-

սալ, որ կինը յանկարծ երեք չափահաս գիւցազուններ ծնաւ՝ հասակով և բնութեամբ կատարեալ: Նոցանից առաջինը՝ առիւծի վերայ նստելով, ոլացաւ գէպի արեմուտք, երկրորդը ընձի վերայ հեծաւ և դէպի հիւսիս արշաւեց, իսի երրորդը՝ մի ահազին վիշապ սանձելով, յարձակվում էր մեր երկրի վերայ»:

«Ալսպիսի խառն երազի մէջ, թւում էր ինձ, իբր թէ կանգնած եմ արքունիքիս տանիքի մերայ. տեսնում եմ իմ ապարանքների երեսը զարդարած գեղեցիկ գորգերով. (տեսնում եմ) մեզ պատկող հրաշատեսիլ աստուածներին այնտեղ կանգնած և իբր թէ ես ձեզ հետ միասին պատվում էի նոցա խնկով և զոհերով: Ալս միջոցին յանկարծ վեր նայելով՝ տեսալ, որ վիշապի վերայ հեծնողը արծուանման թեերով ոլանում, գալիս էր մեզ վերայ և մօտենալով՝ կամենում էր կործանել մեր կուռքերը. Բայց ես, Աժգահակս՝ մէջ ընկնելով, ինձ վերայ ընդունեցի այն յարձակումը և սկսեցի կռուել դիւցազնի հետ: Նախ մենք նիզակներով վիրաւորեցինք միմեանց՝ այնպէս որ արեան վտակներ հանելով՝ մեր արեգակնատես ապարանքների երեսը ներկեցինք կարմրագոյն: Երկար ժամեր (մենք կռուեցինք) և այլ զէնքերով»:

«Բայց ինչ երկարեմ պատմութիւնը. կռուի վախճանը իմ յաղթուելս էր: Սաստիկ քրտինքի և տագնապի մէջ՝ ես վեր թռալ. քունը խափաւ ինձանից, այնուհետև համարեա՛ թէ անկենդան եմ ես: Պատճառը որ՝ ինչ կը նշանակէ այս տեսիլը, եթէ ոչ Հայկազն Տիգրանից մեր վերայ գալիք բուռն յարձակումը: Եւ ով որ աստուածներից յետոյ օգնութիւն հասնի մեզ՝ խօսքով ու գործով, նա արժանի կ'լինի մեզ հետ

Հաւասար վայելել թագաւորական իշխանութիւնը՝
«Աժդահակը, շատ իմաստուն խորհուրդներ լսելով
իւր խորհրդականներից՝ շնորհակալութեամբ պատաս-
խան տուեց նոցա¹⁾:

Ասելով ձեզանից, սիրելիք, շատ հանճարեղ և ի-
մաստուն խորհուրդներ՝ կ'յայտնեմ և իմ մտածութիւն-
ները, որք ներկայ դէպքում՝ աստուածների օգնականու-
թիւնից յետոյ, կարող են օգտաւէտ լինել: Թշնամիների
խորհուրդներն ի գերեւ հանելու աւելի օգտակար մի-
ջոց չ'կայ, քան դաւադրել նոցա սիրոյ պատրուակաւ:
Եւ այժմ մենք այլ միջոց չ'ունինք կատարելու այս դի-
տաւորութիւնը ոչ զանձով և ոչ պատիր խօսքերով,
բայց միայն վարուելով այն կերպով, որ ես յարմարա-
գոյն եմ տեսնում: Այս դաւադրութիւնը և որոգայթ-
ները կարելի է գլուխ հանել միայն Տիգրանի քուր Տիգ-
րանուհու օգնութեամբ, որ կանանց մէջ ամենից զե-
ղեցիկն է և խոհեմը: Որովհետեւ այսպիսի արտաքուստ
խնամութիւնը առաւել կը դիւրացնէ դաւադրութեան կա-
տարումը, երբ կը սկսուին ծածուկ երթեւեկութիւնները.
Հարստութիւն և պատիւ խոստանալով Տիգրանի մտե-
րիմներին՝ կարելի է հրամայել սրով խողխողել, կամ
թունաւորել նորան. և կամ թէ գանձով կաշառելով
նորա հաւատարիմ մարդոց և կուսակալներին՝ զրաւել
նոցա մեր կողմը: Եւ այսպէս կը բռնենք մենք (Տիգ-
րանին)՝ իբրև մի անզօր մանուկ»:

Աժդահակի բարեկամները օգտաւէտ համարեցին այս

խորհութեղը և իսկայն առաջարկութիւնը ոկտավ ի գործ դրուիլ»:

«Աժդահակը ուղարկում է Տիգրանի մօտ իւր խորհրդականներից մէկին մեծագին զանձերով և նամակով, որոյ պատճենն այս էր ¹⁾):

«Դու գիտես, սիրելի եղբայր, աստուածների պարգևած բարիքներից ոչինչ այնպէս օգտակար չ'է մեզ համար այս աշխարհում, ինչպէս սիրելիների բազմութիւնը, մանաւանդ իմաստուն և հզօր (սիրելիների): Պատճառը որ այն ժամանակ խռովութիւններ չ'են ծագիլ արտաքուստ, իսկ եթէ ծագին՝ չկարելով մուտ գործել (տէրութեան մէջ), շուտով կ'ցըուին: Տեսնելով այսպիսի մեծ օգուտ բարեկամութիւններից՝ միտքս դրի ևս ամուր և խորագոյն հաստատել մեր մէջ եղած սէրը, որով երկուսս ևս ամրանալով ամեն կողմից՝ կարող ենք ապահով վարել մեր իշխանութիւնը: Այս ամենը կը կատարուի, եթէ դու տաս ինձ կնութեան Հայոց Մեծաց օրիորդ՝ քո քոյլը Տիգրանուհուն: կարծեմ թէ լաւ կը համարես, որ նա լինի թագուհիների թագուհի: — Ողջ լեր մէր թագակից և սիրելի եղբայր ^{2)*}):

Հայոց թագաւորը՝ չգիտենալով Աժդահակի գաւագրութիւնը՝ համաձայնութիւն է տալիս նորա առաջար-

¹⁾ Գր. Ա. Գլ. 27:

^{2)*} Նամակը մի տարօրինակ երեսյթ է եւ բոպական վիպական աւանդութիւնների մէջ: բայց արևելքումը՝ ընդհակառակը, զա վիպասանութեան սովորական պարագան էր: Օրինակ՝ բացի Հայկական Վախասանութիւնից, դորա նման մի զրագրութեան պատահում ենք Ֆիրդուսիի Շահ—Նամէի մէջ: Տես Մոլի թարգմանութեան Առաջին հատորը էջ 257, 267, 294, 297, 400 և այլն:

կութեանը. նա ուղարկում է իւր քրոջը Աժդահակին՝ ինչպէս որ թագաւորների սովորութիւնն էր. Աժդահակը ընդունում է Տիգրանուհուն և կարգում է նորան առաջինը իւր կանանց մէջ: Այնուհետեւ նա ոչինչ զործ չ' անում իւր տէրութեան մէջ առանց Տիգրանուհու կամքին. նորա խօսքով կարգի էր բերգում ամեն բան և նորա հրամանին պէտք է հնադանդէին ամենքը: Այս բոլորը պատրաստելով, Աժդահակը սկսում է խարդաւանել նորան մեղմ խօսքերով: — «Դու գիտես, ասում է նա, որ քո եղբայր Տիգրանը՝ դոգուուելով իւր Զարուհի կնոջից, նախանձում է քեզ, որ Արեաց Տիկին ես կարգուած: Եւ քնչով արդեօք կարսող է այդ վերջանալ, եթէ ոչ նախ իմ մեռնելովս և ապա Զարուհու Արեաց վերալ տիկին նշանակուելովը և իրքեւ աստուածուհի պաշտուելովը: Հիմա դու պէտք է ընտրես երկուսից մէկը, կամ, եղբօրդ սիրոլ համար խալտառակ կործանումն լանձն առնես Արեաց լանդիման և կամ անձիդ օգուտը ճանաչելով, օգտակար խորհուրդ առաջարկես և հոգ տանես ապագայի մասին»: — Այս խորամանկութեան հետ թագցրած էր և՝ Տիգրանուհու մահը, եթէ նա չ վարուէր Մար—Պարսի^{*}) խրատին համաձայն: Բայց խորագէտ գեղեցկուհին՝ հասկանալով այս դաւաճանութիւնը, պատասխանում է Աժդահակին սիրոլ խօսքերով և ինքը անխապաղ իմաց է տալիս իւր եղբօրը այս նենգութեան մասին՝ մտերիմ մարդոց ձեռով: »

* Այնուհետեւ (Աժդահակը) ոկսում է զործել, դեսպանների միջոցով նա առաջարկում է Տիգրանին Աժդահակը:

^{*} Մար—Պարս՝ այն է Մեդո—Պարս, այսինքն Ըժդահակը:

տեսութեան երկու տէրութեանց սահմանների մէջ տեղը, որպէս թէ խորհրդակցելու մի կարևոր գործի մասին, որ կարելի չ'էր կատարել նամակի միջոցաւ, կամ պատգամաւորութեամբ, բայց միայն իրենց երկուսի երես առ երես տեսակցութեամբ։ Սակայն Տիգրանը՝ Հասկանալով պատգամաւորութեան նպատակը, չ'ծածկեց Աժդահակից նորա գաղտնի խորհուրդները և նամակաւ յայտնեց՝ Բնչ որ կար իւր սրտի խորքում։ Եւ երբ յայտնուեցաւ չարութիւնը՝ ոչինչ խօսք, ոչինչ խորամանկութիւն չ'էր կարող ծածկել այնուհետև այդ չարութիւնը։ Այն ժամանակ գրգռուեցաւ պատերազմը։

«Ապա Հայոց թագաւորը ժողովում է Կապագովկացոց, Վ.րաց ու Աղուանից սահմաններից և Մեծ ու Փոքր Հայքից որչափ ընտիր զօրքեր կալին և բոլոր իւր զօրութեամբ գիմում է Մարաց վերայ։ Այն ժամանակ վտանգ էր սպառնում Աժդահակին պատերազմաւ պատահել Հայկազնին, թէև սակաւ չ'էր նորա զօրքերի թիւը։ Այս Հակառակութիւնը տևեց հինգ ամիս. պատճառը որ առողջ և դիւրակատար գործը հիւանդանում էր, երբ Տիգրանը մտածում էր իւր սիրելի քրոջ վերայ։ Նա աշխատում էր այնպէս հնարել գործի ելքը, որ կարելի լինէր ազատել Տիգրանուհու կեանքը։ Մինչ այս մինչ այն՝ և ահա մօտենում է կռուի ժամը։»

«Բայց գովում եմ իմ քաջահասակ, վայելչակազմ, կատարեալ գեղեցկութեամբ, առոլգ և ուժով ոչ ոքին հաւասար չ'ունեցող նիզակաւորին (այսինքն Տիգրաքին)…։ Երբոր կռիւը սկսուեցաւ, Տիգրանը նիզակով՝ ինչպէս ջուր՝ ճեղքելով Աժդահակի երկաթի ամուր զրահները, շամփրում է նորան նիզակի վերայ և երբ լետ է

քարշում իւր ձեռը՝ նորա թոքի մի մասը նիզակի հետ
դուրս է բերում: — Բայց կոիւր սքանչելի էր, քաջերը՝
հանդիպելով քաջերին, շուտով թիկունք չ'էին դարձ-
նում միմեանց դէմ: Ուստի ժամերով երկարացաւ կոիւր
և Աժդահակի մահը միայն վերջ դըեց գործին: Այս
անցքը այլ յաջողակ դիպուածների հետ առաւել ևս
բարձրացրեց Տիգրանի փառքը¹⁾:

Այս դէպքից յետոյ Տիգրանը բազմաթիւ ուղեկից-
ների հետ ուղարկում է իւր քրոջը Հայաստան, իսկ Աժ-
դահակի Անոյշ անունով առաջին կնոջը և նորա ցեղից
շատ աղջիկներ ու պատանիներ՝ այլ բազմաթիւ գերի-
ների հետ՝ թուով տասն հազարից աւելի, բնակեցնում
է Արարատի արեւելեան կողմերը: Այս գերիների սե-
րունդը դեռ քրիստոնէութեան դարագլխի երկրորդ գա-
րում ապրում էր Հայաստանում²⁾:

Վէպերի մէջ նկարագրվում էին Հայոց թագաւորի
միւս շատ քաջագործութիւնները: Նոցա մէջ տեղի ու-
նէր և նորա կարծեցեալ որդի՝ Վահագնի՝ հրաշալի
ծնունդը, որոյ մասին մենք լիշեցինք վերը³⁾: Ժողո-
վրդական Վէպերից փոխարինած այս հատուածներով
վերջանում է Մովսէս Խորենացու Առաջին Գիրքը: Այդ
հատուածները նկարագրում էին Հայկ նահապետի, Արա-
մի, Արայ Գեղեցկի, Մեծն Տիգրանի և այլոց արարքը:
Բոլոր Հայոց հնագոյն պատմութիւնը, որ ամփոփուած
է Խորենացու լիշեալ Առաջին Գրքի մէջ, իսկապէս ա-

¹⁾ Գր. Ա. Գլ. 29:

²⁾ Գր. Ա. Գլ. 30:

³⁾ Գր. Ա. Գլ. 31.

սած, բաղկանում է ալդ չորս անձանց արարքներից։ Հայկը, որին մեր Ե. դարու քրիստոնեալ հեղինակները նմանեցնում են Հսկալ որսորդ Օրիոնի համաստեղութեան, որպէս և Վահագնին՝ Ապոլլոնին, անշուշտ կէս դիւցազնական անձն է, որ ներկալացնելով արիական տարրը, կռվում է բարելական գլխաւոր աստուածութեան՝ Բէլի (Մէրօդախի) սեմական տարր ներկալացնողի դէմ։ Հայկը լաղթում է Բէլին և դորանով հաստատում է ընդ միշտ իւր անձնաւորած ազգի անկախ գութիւնը։

(Նոյնպիսի դիւցաբանական բնաւորութիւն ունի և Արամը։ Նա իւր ամբողջ կեանքը անցուցանում է կռուելով ոչ միայն տիտանների, այլև Ասորոց գլխաւոր աստուած՝ Բարշամի դէմ, որին և յաղթելով՝ սպանում է

Ալս տեղ դիտողութեան առնելու է, որ Հայկը իւր անունը հաղորդում է ազգին, որ այնուհետեւ Հայք սկսեց անուանել և՛ իրեն և՛ իւր երկիրը։ Նոյնպէս և միւս նահապետի՝ Արամի անունով Ա. ը մ են կոչեցին նորա ազգը օտար ազգերը, իսկ երկիրը՝ Ա. ը մ են ի ա^{*)})։

*) Ազգային Վէպերը՝ Նկարագրելով Բէլի հետ ունեցած Հայկի պատեր ազմը և սորա յաղթութիւնը, լուսութեամբ են անցնում Հայոց նահապետի անմիջական յաջորդների մասին և պատմած են միայն վեցերորդ յաջորդի՝ այն է Արամի վերայ։ Արամը սիրում էր իւր Հայրենի աշխարհը, չէր կարող տեսնել այդ աշխարհը և իւր ազգայիններին ստոր ութեան մէջ դրացի ազգերի լծի տակ ձնշուած։ Ժողովելով իւր զօրքերը՝ նախ Արամը յետ մղեց Մարաց արշաւանքը, որք Նիւքար—Մագեսի առաջնորդութեամբ աւերռում էին նորա երկիրը, և ստիպեց նոցա հարկ վճարել իրեն։ Ապա Ասորեստ անի սահ-

Արայն՝ պաշտպանելով իւր երկիրը, մեռնում է պատերազմի մէջ Ասորեստանեալց թագուհի Շամիրամի դէմ, — դարձեալ կոյւ սեմական տարրի դէմ, այսինքն՝ դարձեալ դիւցաբանական անձի դէմ, որպիսին էր իսկապէս և ինքն Արայն:

Ալսապէս՝ Արայն իւր հօր Արամի և Հայկ նահապեաի հետ միասին ներկայացնում են մի եռանձնութիւն, որ անձնաւորում է իւր մէջ Հայոց աշխարհի գաղափարը, այն աշխարհի, որին քաղաքական գոյութիւն տուին նոքա:

Վերջապէս պատմութեան բեմի վերալ լայտնվում է Տիգրանը, որ արդէն դիւցաբանական անձն չէ, թէև նորա պատմութեան մէջ կան տեղ-տեղ առասպելներ։ Նա կովում է ոչ թէ աստուածների, հսկաների ու տիտանների, այլ Կիւրոսի *) և վերջապէս Մարաց թա-

մաններում՝ նա սաստիկ հարուած է տալիս Ասորիներին, որոց նոյնպէս իրեն հպատակեցնում է։ Նուաճելով տիտաններին, որոց թւում և տիտան Պայտապիս Քաղեային, Արամը կուսակալներ է կարգում իւր հայրենեաց արևելեան և արևմտեան կողմերը, որպէս և Կապագովկիայում։ ուր հրամայում է բնակիչներին խօսել հայերէն լեզուով։ Այս բոլորը հռչակեց Արամի փառքը նորա հայրենիքից դուրս։ ուստի զրացի ազգերը նորա անունով Արմէն սկսեցին կոչել նորա հայրենակեցներին։ (Խորենացի, Գր. Ա. Գլ. 1.—14). — Այս տեղական աւանդութիւնը անկասկած զերագաս պէտք է համարուի յունականից, որ պատմում է՝ իրր թէ Հայաստանը (Արմենիան) ստացել է իւր անունը Յասօնի ուղեկիցների մէկից՝ այն է Թեսաղօնիկեցի Արմենոսից։ (Ստրաբօն, Գր. XI, Գլ. IV).

*) Թէպէտ Կիւրոս ևս չէ բնաւ զերծ առասպելական ընաւորութիւնից, վասն զի նորա անունը համանիշ են ընդունում արեգակին։

գաւոր Աժդահակի դէմ, որ արդէն հաստատ պատմական անձն է:

Վերոլիշեալ հատուածներից պարզ երեսւմ է, որ նոքա քաղուած են ոչ թէ Քաղգէացոց, Ասորոց, Պարսից և Յունաց ազբիւրներից, այլ ազգալին վէալերից: Արդէն մենք չենք խօսում այն բանաստեղծական պատկերների, պատերազմների նկարազրութեանց, ոճի, դարձուածների և այլոց մասին, որք ակնյալտնի մատնում են վերոլիշեալ հատուածների վիպական ծագումը, հատուածների, որք ոչինչ նմանութիւն չունին տարերգութեանց չոր ու ցամաք պատմածներին, որպէս պէտք է որ լինէր կեղծ Մար—Աբասի պամութիւնը:

Դ.

Վիպասանների բանաստեղծական գործունէութիւնը չէր սահմանափակվում միայն Հայկի հարստութեան հերոսների արարքների գովաբանելովը: Հայ Արշակունեաց շրջանը նոյնպէս ունէր իւր երգիչները և վիպական երգերը, որոց փշուրները նոյն իսկ Խորենացին պահպանց մեզ համար: Ներքին և արտաքին կեանքի փոքրի շատէ աչքի զարկող անցքերը արձագանք էին զբանում վիպասանի սրտում և նա բանաստեղծական պատկերներով երգում էր նոցա ժողովրդի առաջ՝ հնչելով իւր բամբիուր: Թագաւորների ու մեծանուն նախարարական ցեղերի արարքը Արշակունեաց որպէս և նախընթաց Հայկուզունեաց հարստութեան ժամանակ, բացի

Նորանից որ գրվում էին Մեհենական պատմութեան կամ թագաւորաց Մատեանների մէջ,—համակրութիւն կամ ստգուանք էին գտնում ազգալին երգիչների կողմից, որոյ ապացուցը կարող է լինել Խորենացու պատմութեան Երկրորդ Գիրքը: Այս Գրքին համաձայն՝ մենք մատնացուց կ'լինինք այն անձների և գեղքերի վերալ, որք նիւթ են դարձել ազգալին Վէպերին:

(Ալստեղ առաջին տեղը բռնում է Տորքը՝ Հալկակի թոռ՝ Պատշաճի կարծեցեալ սերունդից: Ասում ենք «կարծեցեալ» այն պատճառաւ, որ նորան համարում ենք Հալոց գիւցազներից մէկը, որպէս և Վահագնին՝ Մեծին Տիգրանի կարծեցեալ որդուն՝ ընդունում ենք աստուծուտեղ: Բոյարը, ինչ որ վերագրում էին նորան վիպասանները, կարող էր կատարուած լինել միայն աստուծալիին ծագումն ունեցող էակի ձեռով: Խորենացին աւելի բարձր է գասում նորան երևելի գիւցազներից ու հսկաններից, որք հռչակուեցան հնումը իրենց ուժովք՝ Հերակլէսից ու Հերքիւլից, Սամփսոնից և Ռոստոմից, որոց թուին կաւելացնենք մեր կողմից Պօլիփէմին և Կակուսին: Վիպասանը ասում է՝ թէ Տորքը խոժոռ դէմք ունէր, կոպտարանձն, տափաքիթ, խորակն և դժնահալեաց, թէ նա վիթխարի էր հասակով և ուժով: Տորքը առնում էր իւր ձեռը կարծը ու անտաշ քարեր և ճեղքում նոցա ուզածի պէս մեծ ու փոքր. լետու քերում, հարթում էր ալդ քարերը եղունգներով, տախտակ էր կազմում և գծագրում վերան արծիւներ և այլ պատկերներ: Նոյնպէս երգում են (նորա մասին) թէ մի անգամ Պանտոս ծովի եզերքը յարձակուեցաւ նա շինամիների նաւատորմի վերալ: Բայց նաւերը լողացին

գեղի խորը... և Տորքը չ'հասաւ նոցա: Այն ժամանակ նա, ասած է Երգի մէջ, առնում է բլբաձե քարեր և ձգում ծովը. ջրի սաստիկ պատառումից շատ նաւեր տակն են անցնում, մնացեալները քշվում են մղոններով հեռու: ¹⁾:

Հայոց դիւցազնը աւելի նման է Հերակլէսին, Կակուսին, Պոլիփեմին ²⁾, քան Ռոստոմին կամ Սամփոսին:

¹⁾ Զուարձալի է տեսնել: Բնչպէս մեր պատմագիրը բարեհոգութեամբ կասկածում է վիպասանի պատմած Տորքի աշազին ուժի ճշմարտութեան մասին: Ամենաին չ'գուշակելով Տորքի դիւցազնական ծագումը և ընդունելով նորան հասարակ մահկանացուի տեղ՝ Խորենացին բացագանչում է. «ո՞չ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել»:

²⁾ Զարմանալի նման են Տորքի արարքները Հերակլէսի, Կակուսի և Պոլիփեմի քաջագործութիւններին: Պոլիփեմը՝ կատաղելով Ադիւսի հակառակ խօսքերից՝

«... Առ միւս անգամ վէմ առաւել աշազին՝

Ծրջանակեաց, թափ ետ ուժոյն յաղթարազուկ կորովին,

Արկ յետ նաւուն կշիռ ՚ի խելս: գոգցես ՚ի ծայրն զեկին,

Շոնվե ՚ի վիմէն ծփեալ զնաւն ՚ի կոյս վարեր ցամաքին»:

Ադիւսական թարգ. Թումանեան Հատոր Ա.

Հագներգ. թ. էջ 266:

Կակուսին այսպէս է նկարագրում Ավիդիոսը.

«Կակուսը զժնեահայեաց էր՝ վիթխարի հասակաւ. Նորա յժը համաշափ էր մարմնի մեծութեանը: Նա ապրում էր մի ընդարձակ, խոր, անբնակ քարանձաւում, ուր պոզից բըռնած քաշ էր տուել Հերակլէսի եզները՝ մինչ նա հիւր էր եւանդրի տանը Աւզոնի լեռներում: Իայց Ալկիդէսը՝ լսելով եղների բառաշիւնը՝ գալիս է դեպի քարանձաւը, որոց մուտքը Կակուսը փակել էր մի աշազին ժայռով անհնարին մեծութեամբ. տասն եղն հաղիւ կարող էին այդ ժայռը տեղից շար-

Հարեւանցի կնկատենք, որ Մեծն Տիգրանից առաջ շատերը Հալկաղունի իշխաններից, եթէ չասենք բոլորը, որոց նշանաւոր անունները հաղորդում է Խօրենացին, դիւցազնական անձինք են: Այս անուններն առնուած են, անկասկած, ոչ թէ Քաղդէական Գրքից, ինչպէս հաւատացնում է մեր պատմագիրը, այլ ժողովրդական աղբիւրից, եթէ ոչ Վէպերից, որոց մէջ, կարելի է, տեղի ունէին անուններ կրողների արարքը: Նոցա գործերի մասին Խորենացին չ'է լիշում գուցէ այն պատճառաւ՝ որ ինչպէս ինքն է ասում, շտապում է հասնել իւր մօտակալ ժամանակի պատմութեանը¹⁾:

Մինչդեռ Խորենացին իւր պատմութեան Առաջին Գրքում իւր հայրեննեաց անցքերի նկարագրութեան համար նիւթ է քաղում միայն ազգային վէպերից, Երկրորդ Գրքում՝ տեղական և օտարազգի աղբիւրների²⁾

ԺԵԼ: Հերակլէուր՝ բարձրացնելով՝ ժայռը իւր ուսի վերայ, ձգեց նորան մի կողմ. Ժայռի անկման թնդիւնը բարձրացաւ մինչև եթերը, երկիրը վայր իջաւ. Նորա ծանրութիւնից, Կակուսը սկսեց կռուիլ Հերակլէսի հետ. Նորա զէնքերը ժայռեր ու ծառեր էին: Բայց Հերակլէսը դարկեց իւր սասուս զաւազնով հրեշի երեսին և նա անկաւ դետին: Վիժելով արիւն ու ծուխ:

Ovidius Fasti. Գր. I. տող 550 և շարունակութիւն:

1) Գր. Ա. Գլ. 13:

2) Այդ աղբիւրներն են. Յուլիոս Ափրիկանոս, Հիւպոզիտայ նահատակ, Եւսիրոս Կեսարացի, Մանեթոս, Պողիկրատէս, Եւազարոս, Կամազրոս, Փղեգոնիոս, Յովսէպոս, Պերուրնա, Աւղիւպ, Արիստոն Պէղացի, Բարգեծան, Ագաթանգեղոս, Խոռոչըրուտ, Բարսումայ, Փիրմեղիանոս, Արտիթէոս, Պողիփատոս, Փիղէմոն, Պորփիւր և այլք:

բազմութեան պատճառաւ, նա սակաւ է դիմում Վէպերին կամ վիպասանների Երգին: Բայց չ'նայելով սորան՝ մի քանի Հայ Արշակունի թաղաւորներին, որպէս և այն ժամանակի նախարարներին ու զօրապետներին, երջանիկ բախտ վիճակուեցաւ. ազգային Երգիչներն ուշադրութիւն գարձրին նոցա վերալ և անմտչացրին նոցա զինուորական քաջութիւնների ու արկածների լիշտակը: Մենք ակնարկում ենք Արտաշէս Երկրորդի և նորա Արտաւազդ որդու վերալ, թաղաւորի դայեակ և զօրապետ Սմբատի վերալ, Հայաստանում բնակուող Մարաց նահապետ՝ Արդաւանի և ալլոց վերալ: Երկրորդ Գրքի 49-րորդ զըլիում Խորենացին գառնում է զէպի Սահակ Բագրատունին ալսպիսի խօսքերով.

«Վ. Երջին (Բ) Արտաշէսի զործերը մեծ մասամբ յալտնի են քեզ վիպասանական Երգերից, որ երգուած են Գողթան գաւառուած, այն է՝ քաղաքի (Արտաշատի) շինութիւնը, Արտաշէսի խնամութիւնը Ալանների հետ, նորա որդիքը և սերունդը, Սաթինիկի տարփանքը գեպի վիշտապազունները՝ ալսինքն Աժգահակի սերունդը, նոցա գէմ արած պատերազմը, նոցա իշխանութեան կործանումը և նոցա սպանումը, նոցա ապարանքների հրկիզութիւնը, Արտաշէսի որդոց նախանձը և կանանց ձեռով միմեանց գէմ զբգուուիլը. Թէև ալս բոլորը յալտնի է քեզ Վիպասանների Երգերից, բայց մենք այնուամենայնիւ կ'պատմենք քեզ և ալդ աւանդութիւնների ալլարանութիւնը:

Եւ լիրաւի, Խորենացին մանրամասնօրէն պատմում է Արտաշէսի և Արտաւազդի թաղաւորութեան օրով կատարուած անցքերը՝ հետեւելով Երգի ցուցմանը:

Ալանների դէմ սկսած պատերազմի ժամանակ Հայերը գերի բռնեցին նոցա թագաւորի որդուն։ Ալանաց թագաւորը խնդրում է Արտաշէսից վերադարձնել իւր որդուն՝ խոստանալով այլևս չլարձակուիլ Հայաստանի վերալ։ Հայոց թագաւորը մերժում է նորա առաջարկութիւնը։ Այն ժամանակ, ասում է վիպասանը, երիտասարդ արքայորդու քոյրը գալիս է գետի (Կուր) ափը և թարգմանչի միջնորդութեամբ ձալն է տալիս Արտաշէսի բանակը։ «Քեզ եմ ասում, քաջ Արտաշէս, քեզ, որ լաղթեցիր Ալանաց քաջ ազգին. Եկ, լսիր ինձ և արձակիր իմ եղբօրը։ Որովհետեւ պատշաճ չէ դիւցազներին վրէժխնդրութեան համար զրկել կեանքից այլ դիւցազների որդոց, կամ սորկութեան մէջ պահել և դորանով լաւիտենական թշնամութիւն հաստատել երկու քաջ ազգերի մէջ։ Այսպիսի իմաստուն խոսքեր լսելով՝ Արտաշէսը՝ գնաց գետի եղբը և, տեսնելով գեղեցիկ կալսին, սիրեց նորան։

«Եւ կոչելով իւր դալեակ Սմբատին՝ թագաւորը յալտնում է իւր սրտի կամքը—ամուսնանալ կոյսի հետ։ Այնուհետեւ հրամայում է նորան դաշինք կապել քաջ ազգի հետ և արձակել թագաւորի որդուն։ Հաճոյ թուեցացաւ այս Սմբատին. նա ուղարկում է Ալանների թագաւորի մօտ առաջարկելու՝ տալ կնութեան Արտաշէսին Ալանաց մեծ Օրիորդ Սաթինիկին։ Ասում է Ալանների թագաւորը. «Հապա որտեղից կտալ քաջ Արտաշէսը հազարից հազար և բիւրից բիւրը՝ ազնիւ կոյս օրիորդ Սաթինիկի փոխարէն։»

Այստեղ Խորենացին բերում է վէպից առաջիկալ Հատուածը՝ պահելով նորա չափաբերական ձեւը.

«Հեծաւ արի արքայն Արտաշէս՝ ի սեաւն գեղեցիկ.
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթե ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկեց ՚ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցուց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցաննելով ՚ի բանակն իւր»:
Բացի սորանից, պատմագիրը հազորդում է մեզ եր-
երկու տող հարսանեաց երգերից:

«Տեղ ոսկի տեղալը ՚ի փեսալութեանն Արտաշիսի,
«Տեղալը մարգարիտ ՚ի հարսնութեան Սաթինկան»:
Ախպասանների երգից մենք գիտենք, որ Սաթինիկը
եղաւ Հալոց թագաւորի կանանցից առաջինը և շատ
զաւակներ ծնեց: Բայց՝ չնայելով սորան՝ նոցա ամուս-
նութիւնը անբախտ եղաւ, շնորհիւ այն «տենչանքին *),
որով վառվում էր Սաթինիկը գէպի Մարաց գերիների
նահապետ՝ Արգաւանը, որին Արտաշէսը մեծ պատուի
էր արժանացրել՝ նորա ցուց տուած ծառալութեան
համար:

Մաշվում էր Արտաշէսի սիրաը իւր կնոջ անհաւա-
տարիմ լինելուց: Այս գէպքից օգուտ քաղեց նորա որ-
դի Արտաւազգը, որ հոգով նախանձում էր Արգաւանի
փառքին: Նա գրգռեց ոորա գէմ իւր հօր բարկութիւ-
նը՝ հաւատացնելով, որ Արգաւանը միտք ունի ձեռք
բերել արքայական թազը: Թագաւորը, որ տանջվում էր
խանդից, գիւրաւ զիջաւ զրաբարտութեանը, ճոռանալով
ծերունի նահապետի մեծամեծ վաստակները և ի բաց խլե-

*: ՏԵՇ վերը՝ Բ. Գլուխ վերջը.

Լով նորանից «Երկրորդական գահը», յանձնեց Արտաւազ-դին: — Բայց նախանձուա, փառասէր արքալորդին գոհ չմնաց սորանից, և երբ մի անգամ Արգաւանը՝ իրենց հաշտ ժամանակը, ճաշի էր Հրաւիրել թագաւորին և նորա որդոցը, նոքա՛ Արտաւազդից դրդուած, կասկած յարուցին՝ իբր թէ Արգաւանը որոգալի՛ է լարել արքալի կենաց գէմ, և այդ տեղ իսկ ճաշի ժամանակ՝ արձակուելով նորա վերալ, փետեցին նորա ճերմակ մօրուսը: Մեծ խռովութեամբ դարձաւ Արտաշէսը իւր մալրաքաղաքն՝ Արտաշատ և ուղարկեց իւր Մաժան որդուն բազմաթիւ զօրքով՝ հրաման տալով շատերին Արգաւանի սերունդից սպանել, նորա ապարանքները այրել և նորա գեղեցիկ հարճը իրեն բերել:

Մակայն Արտաւազդը՝ գոհ չ' լինելով, որ ստացաւ տէրութեան մէջ «Երկրորդական գահը», իւլեց Վիշապազուններից Երասխի վերայ գտնուած բոլորնոցա կալուածները՝ նախճաւանի հետ միասին: Արգաւանի որդին չ' կարողացաւ տանել այս վարմունքին և պատերազմ սկսեց Արտաւազդի գէմ: բայց արքալորդին՝ յաղթելով նորան, ջնջեց Մարաց նահապետի բոլոր սերունդը, որպէս և իրեն Արգաւանին: Բարի համբաւ չ' թողեց Արտաւազդը իրենից լետու: Եթէ իւր կարճատե թագաւորութեան միջոցին նա չ' կարողացաւ ցոյց տալ ոչինչ նշանաւոր զործ, դորա փոխանակ՝ գեռ արքալորդի եղած ժամանակը՝ նա շատ շարութիւններ գործեց, շատ արիւն թափեց, շատ տեղեր աւերեց իւր հայրենեաց մէջ: Ժողովուրդը, որ իւր թագաւորների ճշմարիտ և անկողմնապահ գնահատողն է, ոչ սակաւ առասպելներ լորինեց չար թագաւորի վերալ: Արտաւազդի համար ասում են,

թէ նա անմահ էակ է, թէ շղթալակապ տրգելուած է ալրի մէջ և երկու շուն հանապազ կրծում են նորա շըդթաները. թէ նա աշխատում է ելնել և վերջ տալ աշխարհին, բայց դարբինների կռանի ձայնից ամրանում են նորա կապանքները¹⁾:

Միւսները պատմում են, թէ Արտաւազդի ծնելու ժամանակ կախարդեցին նորան կանալք Աժդահակի սերունդից, ուստի առաջ եկաւ նորա չար բնաւորութիւնը:

Խորենացուց մենք գիտենք, որ Արտաւազդը խելագարուելով որսի ժամանակ և ալսպէս երկար միջոց ձիով արշաւելով՝ ընկնում է մի խոր փոս և անհետանում:

(Այս եղերական գէպքի առթիւ Գողթան գաւառի երգիչները, քաջ լիշելով իրենց ժագաւորի չար բնաւորութիւնը, որ առասպել էր դարձել ժողովրդի բերտնում, բանաստեղծօրէն երգեցին Արտաւազդի մահը: Արտաշէսի մահուան ժամանակ շատերը յօժարակամ զոհեցին իրենց կեանքը: Վշտացաւ Արտաւազդը՝ տեսնելով այս և ասաց, դառնալով գէպի իւր հօր ուրուականը. «Դու գնացի՞ր, հայր, և քեզ հետ տարար մեր բոլոր երկիրը, ես ինչպէս ժագաւորեմ աւերակների վերալու: Այս խօսքերի համար անիծեց որդուն Արտաշէսը, ասելով. «Երբ գու որսի երթաս գէպի ազատ Մասիսը, թող բռնեն քեզ քաջ, տանեն գէպի ազատ Մասիսը, այնտեղ մնաս և լոյս չ'տեսնես²⁾»:

(Մի այլ առասպել ևս պատմում են նոյն երգիչ-

1) Գ. Բ. Գ. 60, 61.—Եյս սովորութիւնը պահպանուել է մինչև այսօր պարսկահայերի դարբինների մէջ:

2) Գիրք Բ. Գ. 61.

ները, թէ Վիշապազունները գողացան մանուկ Արտաւազդին և դև գրին նորա տեղը¹⁾:

Վերևում մենք լիշեցինք՝ թէ թագաւորների գործերի հետ միասին Վիշապազունները երգում էին և երևելի մեծանուն մարդկանց արարքը: Նոքա չ'խնայեցին մանրամասնօրէն նկարագրելու Արգաւանի բարձր աստիճանը և այն պաշտօնը, որ նա կատարում էր Երուանդ Բ.-ի և Արտաշէս Բ.-ի թագաւորութեան օրով Միւնոյն ժամանակ չ'մոռացան նոքա Արտաշէսի դայեակ՝ Սմբատ գօրապետին: Բոլոր նորա հասարակական

¹⁾ Գր. Բ. Գլ. 61.—Երբեւ լրացումն մինչեւ այժմ ասած-ներիս՝ կարող է լինել առաջիկայ առասպելը: Ընթերցողը չետաքըքութեամբ կ'կարդայ Արտաւաղդի Հայոց Պրոմեթէոսի առասպելի ստեղծանօթ մի այլ օրինակը: Նորա մէջ գործող անձն այս անգամ պատմական Արտաւազդը չէ, այլ նորա առասպելական որդին իւր՝ Հայի ականջին անսովոր—Ը, ի դար անունով: Դիտողութեան արժանի է, որ նա իս ել ադար է նկարագրած: ուրեմն նորա վերայ փոխազդրած է այն: ինչ ո՞վ վիպասանները պատմում էին Հայոց թագաւորի մասին: Աւ-շագրութեան արժանի է նոյնպէս երկու շան մանրամասն նկարագրութիւնը: որոց մեր աւանդութիւնը ևսպիտակ և «սւեց ածականներով է որոշում: Վերջապէս վիպասանների Երգի մէջ յիշած քաջք» այստեղ կոչում են Ծիգարի «աստուածներ», Ափսոս որ այս աւանդութիւնը աղաւաղած է Քրիստոնէութեան աղդեցութեամբ: այդ աղարտումը մենք կ'նշանակենք նոտր գրերով: որպէս զի ցոյց տանք առասպելը որքան հնար է, իւր սկզբնական անկեղծ ձևով: Աչա այդ աւանդութիւնը:

«Արտաւազ անունով Հայոց մի թագաւոր կար, որ ունէր խելագար որդի՝ Ծիգար: Իւր մեռնելու ժամանակ Արտա-

գոծունէութիւնը, բոլոր լազթանակով աւարտած պատերազմները՝ Ալանաց, Կասպից և Հռովմայեցոց (Դոժիդիանոսի օրով) դէմ, արձագանք գտան վիպասանների կողմից, որք երգում էին Սմբատի արկածները մի առանձին համակրութեամբ։ Խորենացին երգիչների խօսքերով հաղորդում է մեզ մի հատուած, որոյ մէջ նկարագրած է իրենց սիրելի զօրապետի արտաքին տեսքը՝ ալսպիսի խօսքերով.

աղը չ'յանձնեց թագաւորութիւնը Շիդարին, որովհետեւ սա իելագար էր։ Աւասն որոյ աշխարհը վրդովեցաւ և շատ աւելումներ էր լինում։ Մի օր Շիդարը ձի հեծաւ և հրամայեց փող փշել ու հրատարակել, թէ նա կամի թագաւորել։ և զընաց ընտիր հեծելազօրքով զրօսնելու, Երբ նա հասաւ գետի խամրջին՝ պիզ այսը (շար ոգին) շարժեց այստեղ, և նա անկաւ գետը ու կորաւ, ևսկ հեծելազօրքը լուր տարածեց, իր թէ Շիդարի աստուածները յափշտակեցին նորան և զրին Աև լերան մէջ, որ Եւագ Մասիսն է, և նա շղթայած կայ սյստեղ, և երկու շուն՝ մէկը սպիտակ և միւսը սև, հանագազ լիզում են Շիդարի շղթաները, այնպէս որ տարուայ իերջը նորա մազի պէս բարակում են, և եթէ կտրուին Շիդարը կ'ելնի և աշխարհը կ'աւերէ։ Սորա առաջը առնելու համար կախ արդ ները սահմաննեցին, որ իւրաքանչիւր տարեմտին՝ նաւասարդի մէկին, ամենայն գործաւոր, Բ'նձ արհեստի տէր որ լինի նա, երեք անգամ կոփէ դարբնասալը, որպէս զի Շիդարի կապը, որ մազի բարակութեան է հասել, յարձեալ հաստանայ և ամրանայ, որ Շիդարը չ'ելնի և չ'աւերէ աշխարհը

(Բազմավեց ար, 1877 թ. էջ 277)

« Նորա (Սմբատի) անդամների չափը համեմատ էր նորա քաջութեանը։ Նա գիտէր գրաւել մարդոց սրտերը։ Նա զարդարուած էր գեղեցիկ ալիքով։ Նորա աչքերի մէջ կար արեան նիշ՝ որպէս պատահում է ոսկու և մարգարտի մէջ։ Մարմնով և անձամբ ճարպիկ լինելով՝ նա զգուշ էր ամեն բանի մէջ։ իսկ պատերազմում այնպէս աջողակ' ինչպէս ոչ ոք»։

Վաղարշը (193—213 թ. լետով) վերջինն էր հայ Արշակունի թագաւորներից, որով գործերը անցան Վէպերի մէջ և որով մասին լիշում է ինքը Խորենացին։ Այս թագաւորի բալոր գործունէութիւնից մեր պատմագիրը նորա շինութիւնների վերայ է գարձնում իւր ու-

Հայր Սրուանձտեանը իւր «Գրոց ու Բրոց» աշխատութեան 132 երեսում՝ հաղորդում է առաջիկայ աւանդութիւնը, որ պահուել է Տաճկահայերի մէջ։ Նա ասում է, որ Վանայ բերդից դեպի արևելք միլեռնագօտի կայ, որոյ արևելքան գլուխը կոչում է Զըմփ զը մփ մաղաքայ, արևմտեան ծայրը՝ Ագրիի և մէջտեղը՝ Մհերի Դուռ։ Դա մի լերկ քար է, տաշած ու ուկած մեծ դրան ձեռք։ Դրան վերեից կաթ կաթ ծորում է սև ջուր։ Ասում են, թէ Մհերն և իւր ձին Աստուծոյ հրամանաւ փակուած են այնտեղ։ թէ այն սև ջուրը՝ նորա ձիու մէզն է, Այդ դրան ներսը ճախրի ֆալակ (աշխարհի անիւր) է դառնում։ Մհերը շարունակ նայում է դորա վերայ, երբ այդ ճախրը դադարի, այն օրը կ'ազատուի Մհերը, դուրս կ'ելնի և աշխարհը կ'աւերէ»։

Դ դէպ է այստեղ մէջ բերել և Վանայ աւանդութիւնը Ամիրանի մասին, որ մենք առաջին անգամ 1850 թ. հաղորդեցինք գիտնական աշխարհին Հայոց Վէպերի վերայ գրած մեր աշխատութեան մէջ։

դրութիւնը։ Նոցա մէջ մանաւանդ աչքի են ընկնում պարշաւանը, ևս աւելի՝ Վարդգէսի աւանը, որ նա պատեց պարսպով և անուանեց Վաղարշապատ։ Այս շինութիւնների նկարագրութիւնից Խորենացին առաջ է երում առաջիկայ տողերը վիպասանի լատուկ խօսքեպի։ Այդտեղ ասած է Հայկազն Երուանդի (Մեծն Տիգրանի հօր) փեսալ՝ Վարդգէսի մասին, որ 2450 տարի մեզանից առաջ՝ մեզ անլալտ Տուհաց գաւառից գալիս է Արարատեան աշխարհը և հիմք է դնում մի աւանի՝ «Վարդգէսի աւան» կոչելով նորանո Այս իսկ աւանն էր, որ Վաղարշը պատեց պարսպով և անուանեց, ինչպէս որ ասած է, Վաղարշապատ, որ մինչեւ այսօր գոյութիւն ունի։ — Ահա այդ հատուածը.

«Հատուած գնացեալ Վարդգէս մանուկ ՚ի Տուհաց գաւառէն

Ըղթասաղ գետով,

Եկեալ նստեալ զԵրէշ բլրով՝ զԱրտիմէդ քաղաքաւ՝

Ըղթասաղ գետով,

Կռել կոփել զգուռն Երուանդալ արքալի»։

«Մի կին ճանապարհին բռնվում է ծննդական ցաւով։ Նա ծնում է արու զաւակ և անունը դնում է Ամիրան։ Մայրը ուզում էր մլրտել իւր որդուն, բայց շուարած էր՝ չ'գտնելով ո՛չ ոքի, որ կատարէր նորա բաղձանքը, Եւ մինչդեռ մայրը խորասուզուած էր մտքերի մէջ։ Եկաւ կանգնեց նորայանդիման մի ծերունի, որ մլրտելով մանուկին, խոստացաւ մօր կամքի համաձայն, խնդրել նստծուց մանուկի համար մեծ ոյժ։ որ և պարգևեց նորան Աստուած։ Մանուկը մեծացաւ, զարգացաւ և ամենայն տեղ յաղթող երկեցաւ՝ գործելով մեծամեծ քաջութիւններ։ Աւստի հպարտացաւ, գոռոզա-

Յիշենք վերջապէս և այն մի քանի տողերը, ուր վիպասանը խօսում է Արծրունեաց ցեղի մասին։ Հաղամակերտում, որ Արծրունի իշխանների մայրաքաղաքն էր, այս նշանաւոր ցեղի անդամներից մէկի՝ Աղբամէլի (սա է և Արգամոզան) վերայ երգում էին ՚ի միջի ալլոց և այս.

«Նիրհում է մանուկը (բաց օդի մէջ)։ Նորան տանջում է անձրել, նորան ալրում է արեգակը և թըռչունը հովանի է եղել իւրթերով թալկացեալ մանուկին»։

՚Ի վերջու մէջ բերենք վիպասանների ՚ըրգից Արտաշէս թագաւորի մասին մի հետաքրքրական հատուած, որ պահպանուել է մինչև X դարը Միջազետքի դուքս՝ Գրիգոր Մագիստրոսի նամակների մէկի մէջ։ Մագիստրոսը ինքը լսել է, ինչպէս ժողովուրդը երգում էր ալդ հատուածը։ Դորա առթիւ նա մի քանի խօսք է ասում, առաջարկելով հատուածի բովանդակութիւնն, ինչպէս երեսում է, նոյն իսկ Նըրգի բառերով։ Վիպասանը երե-

ցաւ և նոյն իսկ Աստծուն յանդգնեցաւ մարտի կոչել Զայրացաւ նորա վերայ երկնքի Տէրը և փակեց նորան Կովկասի լեռներից մէկի մէջ կապելով նորան երկաթի շղթաներով։ Նմիրանի սուրը մի կողմէ ընկած և միայն նորա հաւատարիմ շունը անդադար լիզում է իր տիրոջ շղթաները, որպէս զի ազատէ նորան կապանքներից։ Անզեղջ հսկան անհամբեր մնում է այն օրուան, երբ՝ ոզատուելով կապանքներից կհանէ իւր վրէժը։ Սակայն վերին տեսչութեան վճիռը առ է։ որովհեռև աւագ հինգշարթի երկրի խորքից մի դարբին է դուրս գալիս և սաստիկ ծեծում է մաշուած շղթան, մինչև որ նա դարձեալ ամրանում է։ իսկ ինքը իսկոյն անհետանում

ւակալում է մեռած թագաւորին տարտարոսի մէջ. Արտաշէսր ափոսում էր, որ անդարձ անցել, գնացել են արքայական զուարճութիւնները, որ ինքը ալլես չ' տեսնիլ զալարուող ծուլիս, որ գուրաէ գալիս ծխնելոլգներից և տարածվում է առաւօտները գիւղերի և աւանների վերալ: Այսպէս հեծեծում էր և Աքիլէսը, որ աւելի կամէր մշակ լինել և աշխատել դաշտում, քան թագաւոր լինել տարտարոսի մէջ:— Այստեղ խօսքը այն Արտաշէսի մասին է, որ ստորերկրեալ աշխարհից անիծեց իւր Արտաւազդ որդուն նորա լանդիմանութեան համար, և այդ անէծքը շուտով կատարուեցաւ, ինչպէս որ տեսանք վերեւում: — Սրտառուչ են այս մի քանի տողերը.

Ո՞ւ տալլը ինձ, ասէր, զծուխ ծխանի
Եւ զառաւօտն նաւասարդի,
Զվագելն եղանց և զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թըմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է թագաւորաց:

Է: Այսպէս կրկնվում է տարեցտարի և Ամիրանը մնում է անզերդ իւր կապանքներում:

Մենք կ'հարցնենք. արդեօք այս առասպելների անձինք յունաց Պրօմէթէոսի նախատիպերը չեն, Պրօմէթէոսի, որ միժամանակ շղթաներով կապուած էր Կովկաս լերանը, այս տարբերութեամբ, որ սորան ազատեց Հերակլէսը, մինչդեռ Հայոց Արտաւազդը, Շիդարը, Մշէրը և Արաց Ամիրանը անմահ են մնում և դատապարտուած են յաւիտենական տանջանքի: — Ինչ ե իցէ, բայց Հին Հայոց և Կովկասեան ազգերի մէջ տարածուած Պրօմէթէոսի առասպելը արժանի էր, որ քնութեան ենթարկուէր յունաց աւանդութեան հետ միասին:

Վերեւում մենք լիշեցինք տարտարոս, ստորեր կը եալ աշխարհի բառերը այն պատճառաւ, որ Արտաշէսը՝ քանի կենդանի էր, կարիք չունէր ցաւելու ափսոսալ այնպիսի բանի համար, որ առանց մի գժուարութեան կարող էր ինքը ձեռք բերել. նա ցաւում էր, որ այլևս կարող չէ զուարճանալ արքայավայել զբոսանքով՝ որսով, որ նա զրկուել է այն վալելչութիւնից, որը զգում էր իւր կենդանի ժամանակ՝ վաղ առաւօտեան որսի գնալիս:

Այս մի քանի տողերից, որպէս և Արտաշէսի՝ իւր Արտաւազգ որդուն տուած անէծքից, պարզ երեւում է, որ հեթանոս Հայերը հաւատում էին տարտարոսին և ստորերկրեալ աշխարհին, ուր թագաւորների և գիւցազների ուրուականները՝ Յունաց տարտարոսի ուրուականների նման, թախծանօք էին լիշում այն վալելչութիւնների անդարձ կորուստը, որով զուարճանում էին իրենք լոյս աշխարհում:



«Վեպը հնոյն Հայաստանի», քննութիւն Մկրտչի էմին,
Մոսկուա, 1850 թ. էջ 98 in—8°.

Այս քննութիւնից յետոյ ժամանակագրական կարգով
լոյս տեսան.

1. «Պատմութիւն մատենագրութեան Հայոց (ուրև և քըն-
նութիւն Հայոց վէպերի մասին) աշխարհաբառ. ՚ի Հ. Յովե-
սէ փ Ա. Գաթը Ճեան. էջ 62, in—8°.

2) «Վենետիկեան, «Բազմավէպի», 1850 թ. յունվարի
գրքի մէջ մի քննութիւն կայ ։ ուամկական վիպասանութիւնն
վերնագրով՝ աշխարհիկ լեզուով գրած:

3) «Journal Osiatique» հանդիսի 1852 թ. յունվարի
գրքի մէջ ֆրանսիացի Հայագէտ Եղուարդ Դիւլօրիէն մի յօ-
դուած նուիրեց մեր «Վեպը հնոյն Հայաստանի», քննութեան
այսպիսի վերնագրով. «Etudes sur les chants historique et
les traditions populaires de l'ancienne Arménie d'après une
Dissertation de M. Emin».

4) Միւնոյն ֆրանսիացի գիտնականը կրկին անգամ
քննեց այդ հետաքրքրական խնդիրը և «Revue des deux mon-
des հանդիսի 1852 թ. գարձեալ մեր «ըննութեան» առթիւ
մի այլ յօդուած հրատարակեց. «Les chants populaires de
l'Arménie», —Եթէ չելք սխալվում, պ. Դիւլօրիէի այս յօ-
դուածը իւր ժամանակին թարգմանուեցաւ ռուսերէն՝ պ.
Բերժէի ձեռամբ.

5) 1861 թ. «Etudes sur les soyrces qe l'Histoire
de l'Arménie de Moise de Khoren» վերնագրով յօդուածում
հանգուցեալ Հայագէտ Վեկտոր Լանգլուան նոյնպէս խօսում
է Հայոց պատմական Երգերի վերայ. Վերջապէս՝

6) 1865 Հ. Գարեգին Զարբանալեան Վենետիկի
Միւթեաններից, իւր «Պատմութիւն Հայերէն դպրութեան»
աշխատութեան մէջ 17 էջ է նուիրում վիպասանական Երգե-
րին «Գողթան Երգեր» վերնագրով. —Հեղինակի ասելով, նա
ոչ մի սեպհական կարծիք չէ յայտնում այդ խնդրի վերայ,
այլ հաղորդումէ այն եղբակացութիւնները, որոց հասել են
իւր Հայրենակիցները վիպասանական Երգերի վերաբերմամբ.

